Թողարկման 21-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2014

Դեկտեմբեր

թիվ 12 (196)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-202-Ն ՀՀ օրենքը

4 «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-253-Ն ՀՀ օրենքը

5 «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-268-Ն ՀՀ օրենքը

5 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-269-Ն ՀՀ օրենքը

6 «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-270-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Իդրամ» դրամական փոխանցումներ իրականացնող ՍՊԸ-ի «Վանաձոր» մասնաճյուղը հաշվառելու, ինչպես նաև «ՄԵԳԱՏՐՈՆ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման, «Մոբիդրամ» ՓԲԸ-ին վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները որոշ ՈՒՎԿ ՓԲԸ-ների մասնաճյուղեր գրանցելու, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ին բանկի «Փոստբանկ Կապան 01» մասնաճյուղի գործունեությունը դադարեցնել թույլատրելու, ինչպես նաև 4 գրավատների, 9 արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և 1 ՓԲԸ-ի, 6 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 370Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 309-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 310-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 311-Ն որոշումը «Բաց կամ միջակայքային ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/26-ը հաստատելու մասին»

34 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 335-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

35 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 336-Ն որոշումը «Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու խնդրանքի քննարկման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգը» հաստատելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 337-Ն որոշումը «Ապահովագրական ընկերությունների կողմից Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 339-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հունիսի 24-ի թիվ 146-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

43 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 340-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

46 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 369-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

47 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Բաժնետիրական ընկերությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
20 դեկտեմբերի 2014 թ., Երևան, ՀՕ-202-Ն

«Սնանկության մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[****]

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-51-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1) սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում)՝ եթե պարտապանի հանրային իրավական դրամական պահանջներով կատարման ենթակա պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը՝ իրավաբանական անձի դեպքում՝ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ գնահատման ստանդարտների հիման վրա կատարված գնահատմամբ (հաշվեկշռային անվճարունակություն)□ Ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա, օրենքի համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2014 թ., Երևան, ՀՕ-253-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 34 (166), 06.11.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 1-ին (ՀՀՊՏ N 73 (1086), 24.12.14):
[***] *ՀՀՊՏ 2007 N 7 (531), 31.01.07:*
[****] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին (ՀՀՊՏ N 76 (1089)[1], 30.12.14):

«Բանկերի և բանկային գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի 75.1-ին հոդվածում արտահերթ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14.1 գլխի պահանջներին համապատասխան» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2014 թ., Երևան, ՀՕ-268-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին [**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 138-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «արտահերթ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխի պահանջներին համապատասխան» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2014 թ., Երևան, ՀՕ-269-Ն

[*] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին (ՀՀՊՏ N 76 (1089)[1], 30.12.14):
[***] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» [*]
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին [**]

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների և երրորդ անձանց» բառերը.

2) 4-րդ մասի առաջին նախադասության «իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրավի իրավունքի գրանցման պահից» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 14.1-ին գլխով նախատեսված հիմքերով» բառերով.

3) 4-րդ մասի երկրորդ նախադասության «գրավի իրավունքի գրանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «գրավի իրավունքը գրանցվում է «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերով.

4) 4-րդ մասի երրորդ նախադասությունը հանել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2014 թ., Երևան, ՀՕ-270-Ն

[*] *ՀՀՊՏ 2001 N 38 (170), 07.12.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին (ՀՀՊՏ N 76 (1089)[1], 30.12.14):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառվել է*** «Իդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վանաձոր» մասնաճյուղը (որոշում թիվ 344Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «ՄԵԳԱՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 345Ա):
- ***Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության լիցենզիա է տրամադրվել*** «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 346Ա):
- ***Գրանցվել են*** «Կամուրջ» և «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Ապարան», «Հրազդան» և «Տաշիր», «Ալավերդի», «Մարալիկ», «Մարտունի», «Մեղրի» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/1219Ա, 1/1288Ա):
- ***Թույլատրել*** «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը դադարեցնելու «Փոստբանկ Կապան 01» մասնաճյուղի գործունեությունը (որոշում թիվ 1/1265Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 գրավատների, 9 արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 22245000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/1215Ա, 1/1220Ա, 1//1261Ա, 1/1262Ա, 1/1246Ա-1249Ա, 1/1251Ա, 1/1253Ա, 1/1257Ա, 1/1258Ա, 1/1291Ա), 1 փակ բաժնետիրական ընկերության, 6 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1205Ա, 1/1241Ա, 1/1242Ա, 1/1250Ա, 1/1259Ա, 1/1260Ա, 1/1263Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 370Ա որոշմամբ 2014 թ. դեկտեմբերի 24-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 20.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 7.0%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով միասնականացնել ընկերությունների կողմից տեղեկատվական ամփոփագրերի միջոցով հրապարակվող տեղեկատվության կառուցվածքը և սպառողների համար հեշտացնել իրենց մատուցվող ֆինանսական ծառայությունների միջև համեմատություն կատարելու և տեղեկացված որոշում կայացնելու գործընթացը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **ո ր ո շ ու մ է .**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03» հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) Կանոնակարգը լրացնել նոր 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն կանոնակարգով սահմանված կանոնները կիրառվում են սպառողական վարկերի վրա, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգի 7.1-րդ գլխով:»,

2) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել նոր 27-րդ և 28-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«27) «Սպառողական վարկի էական պայմանների ընդհանրական թերթիկ (այսուհետ՝ Ընդհանրական թերթիկ)»՝ փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ սպառողական վարկի գծով բոլոր հաճախորդների համար կիրառելի՝ վարկի էական պայմանները, սակագները, սպառողի իրավունքներն ու պարտավորությունները և ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները:

28) «Սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ (այսուհետ՝ Անհատական թերթիկ)»՝ փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ սպառողական վարկի գծով վարկային պայմանագրի կնքման դեպքում տվյալ սպառողի համար կիրառելի՝ վարկի էական պայմանները, սակագները, սպառողի իրավունքներն ու պարտավորությունները և ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները:»,

3) Կանոնակարգի 4-րդ կետի 1-ին ենթակետը «Ֆինանսական օգնական համակարգի,» բառերից հետո լրացնել «, Ընդհանրական թերթիկի» բառերով,

4) Կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետը «եզրերի» բառից հետո լրացնել «(օրինակ՝ ընկերությունները խուսափեն այնպիսի բառերի օգտագործումից, ինչպիսին «կետանց» բառն է)» բառերով,

5) Կանոնակարգը լրացնել նոր գլուխ 7.1-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 7.1. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

43.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը և վարկային կազմակերպությունները բոլոր սպառողների համար յուրաքանչյուր սպառողական վարկի էական պայմանների վերաբերյալ տեղեկությունները հրապարակում են առանձին թեր-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. նոյեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.12.2014 թ. (ՀՀԳՏ N32 (511), 15.12.2014):

թիկի ձևով՝ համաձայն Հավելված 15-ի (վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում՝ համաձայն Հավելված 17-ի), ապահովում են դրա առկայությունը և հասանելիությունը ընկերության ինտերնետային կայքում և գործունեության վայրում ու տրամադրում են հաճախորդի կողմից դրսևորված հետաքրքրության և (կամ) պահանջի դեպքում:

43.2. Ընդհանրական թերթիկը ներառում է հետևյալ տեղեկությունները.

1) ընկերության լրիվ անվանումը և կապի միջոցները (հեռախոսահամար, հասցե, էլեկտրոնային փոստի հասցե),

2) վարկի էական պայմանները, այդ թվում՝

ա. վարկի տեսակը,

բ. վարկի գումարի նվազագույն և առավելագույն սահմանաչափերը,

գ. վարկի տրամադրման նվազագույն և առավելագույն ժամկետները,

դ. վարկի անվանական և փաստացի տարեկան տոկոսադրույքները: Ընդ որում՝ տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով նշում, որում բացատրվում է անվանական և տարեկան փաստացի տոկոսադրույքների տարբերությունը,

3) եթե վարկառուի պարտավորությունների կատարումն ապահովված է գրավով և (կամ) երաշխավորությամբ, ապա ապահովվածության մասում նշվում է՝

ա. գրավի տեսակը,

բ. երաշխավորության մասին,

4) այլ պայմանները, այդ թվում՝

ա. «վարկ հարաբերած գրավի արժեք» առավելագույն ցուցանիշը՝ տոկոսային արտահայտությամբ (գրավի առկայության դեպքում),

բ. մայր գումարի և տոկոսագումարների մարումների հաճախականությունը (չի կիրառվում վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում),

գ. վարկով ձեռք բերվող ապրանքի, ծառայության կամ աշխատանքի կատարման համար վճարվող կանխավճարի և վարկի գումարի տոկոսով արտահայտված հարաբերության նվազագույն և առավելագույն մեծությունները (չի կիրառվում վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում),

դ. վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում՝ արտոնյալ ժամկետը («գրեյս պերիոդ»), հաշվի նվազագույն շարժը և վճարման կարգը, չօգտագործված միջոցների դիմաց հաշվարկված տոկոսադրույքը,

5) վարկառուի կողմից ընկերության պարտադիր վճարման ենթակա վճարների չափը և պարբերականությունը,

6) վարկառուի իրավունքներ մասում ներկայացվում են տեղեկություններ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրեդիտավորման պայմանագիրը լուծելու՝ սպառողի իրավունքի և 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու՝ սպառողի իրավունքի վերաբերյալ,

7) վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքները մասում ներկայացվում են պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը և կիրառման դեպքերը, ինչպես նաև նշում վարկառուի կողմից պարտավորությունների կատարման դեպքում մարումների հերթականության և այլ հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ, այդ թվում՝

ա. գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ,

բ. վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում վարկառուի այլ գույքի հաշվին պարտավորությունների մարման հնարավորության վերաբերյալ,

գ. վարկառուի վերաբերյալ տեղեկատվությունը «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով վարկային բյուրոյին տրամադրման վերաբերյալ,

8) վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

9) ընկերության կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը, վարկային հայտ ներկայացնողին որոշման մասին տեղեկացնելու և վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը,

10) երաշխավորության վերաբերյալ բացատրական տեղեկատվությունը:

43.3. Ընդհանրական թերթիկում տվյալները լրացվում են լրացման ուղեցույցի օգնությամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի: Վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում Ընդհանրա-

կան թերթիկը լրացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի: Լրացման ուղեցույցը նախատեսված է միայն ընկերության համար և չի տրամադրվում վարկառուին:

43.4. Եթե Ընդհանրական թերթիկում նշված վարկն ունի գործողության ժամկետ, ապա Ընդհանրական թերթիկի դիմային էջում նշվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ պայմաններն ուժի մեջ են: Եթե Ընդհանրական թերթիկի հրապարակման պահին հայտնի չէ, թե նշված վարկը մինչև որ ժամկետը կգործի, ապա Ընդհանրական թերթիկի դիմային էջի վրա նշվում են հրապարակման ամիսը և տարեթիվը:

43.5. Ընկերությունը չի կարող փոխել Ընդհանրական թերթիկի տեքստը և դիզայնը, սակայն կարող է ավելացնել իր լոգոն՝ ելնելով մարքեթինգային քաղաքականությունից:

43.6. Ընկերությունը սպառողին տվյալ վարկի գծով, բացի սույն կանոնակարգի 43.2 կետով սահմանված տեղեկատվությունից, լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու դեպքում այն կցում է Ընդհանրական թերթիկին:

43.7. Ընդհանրական թերթիկը յուրաքանչյուր վարկատեսակի համար առանձին է: Միասնական մեկ թերթիկի ձևով ներկայացնելու դեպքում թերթիկը պարունակում է յուրաքանչյուր վարկի վերաբերյալ օրենքով և սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունն առանձին:

43.8. Ընդհանրական թերթիկում սպառողական վարկի էական պայմանների փոփոխության դեպքում դրանք տեղադրվում (փակցվում) են գործունեության վայրում ոչ ուշ, քան այդ պայմանների կամ դրանցում փոփոխությունների ուժի մեջ մտնելը:

43.9. Ընկերությունը վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո նախքան վարկային պայմանագրի կնքումը սպառողին տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ի»,

6) Կանոնակարգի 49-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) Սպառողական վարկերի գծով՝

ա. վարկի ձևակերպման վայրը (բանկո՞ւմ, թե՞ առևտրի կետերում, գլխամասո՞ւմ, թե՞ մասնաճյուղում),

բ. հայտարարություն այն մասին, որ ընկերությունը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ի»,

7) Կանոնակարգի 57-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) հայտարարություն այն մասին, որ ընկերությունը վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան վարկային պայմանագրի կնքումը, տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ի:»,

8) Կանոնակարգը լրացնել Հավելված 15-ով, 16-ով, 17-ով և 18-ով՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 3-ի և Հավելված 4-ի (կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի փետրվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 նոյեմբերի 2014 թ., N 309-Ն

Վարկատուի լոգո (տեղմել և բեռնել)

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գործողության սկիզբ _____ Ավարտ _____

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ**, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

1.

Վարկատուի անվանումը

Գտնվելու վայր

Հեռ.

Էլ. փոստ

2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Վարկի անվանում

2.2 Վարկի գումար *ՀՀ դրամ*

2.3 Վարկի ժամկետ *ամիս*

2.4 Տարեկան անվանական տոկոսադրույք (ՏԱՏ)

Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:

2.5 Տարեկան փաստացի տոկոսադրույք (ՏՓՏ)

Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելի, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:

3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

☐ **3.1 Գրավ**

☐ **3.2 Երաշխավորություն**

4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն %

4.3 Կանխավճար/վարկ հարաբերակցություն %

4.2 Մարումների հաճախականություն

○ **Մայր գումար**

○ **Տոկոսագումար**

Այլ հաճախականության դեպքում նշել ձևը

5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

5.1 Վարկային հայտի ուսումնասիրության

5.2 Վարկի սպասարկման

5.3 Գրավի գնահատման

5.4 Նոտարական վավերացման

5.5 Գրավի ապահովագրության

5.6 Այլ միջնորդավճարներ

5.7 Ընդամենը այլ վճարներ

Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար

6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):

Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում	
7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում	
7.3 Այլ վճարներ	

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

○		○	
○		○	
○		○	
○		○	

9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ		*օր*
Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ		*օր*
Վարկը տրամադրելու ժամկետ		*օր* *(պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո)*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵՋ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»,
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

ԻՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մովսես Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

»

Սպառողական վարկի էական պայմանների ընդհանրական թերթիկի (այսուհետ՝ Ընդհանրական թերթիկ) լրացման ուղեցույց

Սույն ուղեցույցը չի տրամադրվում վարկառուին:

1. ***Ընդհանրական թերթիկը*** տրամադրվում է միայն 10,000,000 ՀՀ դրամը չգերազանցող վարկերի համար:

2. ***«Գործողության սկիզբ»*** և ***«Ավարտ»*** տողերում լրացվում են տվյալ թերթիկի պայմանների գործողության սկիզբը և ավարտը՝ օր/ամիս/տարի ձևաչափով: Գործողության ժամկետներ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ Չի սահմանվում:

3. ***«1. Վարկատուի վերաբերյալ»*** վանդակում լրացվում են վարկատուի անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, փոստային հասցեն(երը) (օրինակ՝ ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Աբգ 11), հեռախոսահամար(ներ)ը (օրինակ՝ +(37410) 123456) և էլեկտրոնային հասցեն(երը), որոնցով վարկառուն կարող է սպառիչ տեղեկություններ ստանալ տրամադրվող վարկի վերաբերյալ: Ընդ որում, եթե առկա է կենտրոնացված թեժ գիծ, ապա նշվում է թեժ գծի հեռախոսահամարը, եթե ոչ՝ նշվում է այն հեռախոսահամարը, որի միջոցով վարկառուն կարող է առանց խոչընդոտների կապ հաստատել վարկատուի հետ:

4. ***«2.1. Վարկի անվանում»*** տողում լրացվում են վարկատուի կողմից տրամադրվող սպառողական վարկի անվանումը և տեսակը: Օրինակ՝ «Էքսպրես վարկ» սպառողական վարկ:

5. ***«2.2. Վարկի գումար»*** տողում լրացվում են վարկի գումարի նվազագույն և առավելագույն արժեքները: Օրինակ՝ 500,000 - 10,000,000: Վարկի նվազագույն չափ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ առավելագույնը «սահմանված առավելագույն գումարը»: Օրինակ՝ առավելագույնը 10,000,000: Վարկի առավելագույն չափ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ սկսած «սահմանված նվազագույն գումարից»: Օրինակ՝ սկսած 500,000-ից:

6. ***«2.3. Վարկի ժամկետ»*** տողում լրացվում են վարկի նվազագույն և առավելագույն ժամկետները ամիսներով: Օրինակ՝ 3-24: Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ առավելագույնը «սահմանված առավելագույն ժամկետը»: Օրինակ՝ առավելագույնը 24: Վարկի առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ սկսած «սահմանված նվազագույն ժամկետից»: Օրինակ՝ սկսած 3-ից:

7. ***«2.4. Տարեկան անվանական % (ՏԱՏ)»*** տողում լրացվում է վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը: Տվյալ վարկի համար տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն արժեքներ սահմանված լինելու դեպքում լրացվում են ՏԱՏ-ի նվազագույն և առավելագույն արժեքները: Օրինակ՝ 11-15:

8. ***«2.5. Տարեկան փաստացի % (ՏՓՏ)»*** տողում լրացվում է վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ ՏԱՏ-ի և 5.1-5.6-րդ կետերով սահմանված վճարների համար լրացվել են նվազագույն և առավելագույն արժեքներ, ապա լրացվում են ՏՓՏ-ի նվազագույն և առավելագույն արժեքները: Օրինակ՝ 25,4-40:

9. ***«3.1. Գրավ»*** տողում լրացվում են վարկի ապահովման միջոց հանդիսացող գրավի տեսակ(ներ)ը և դրա(նց) նկատմամբ պահանջները: Օրինակ՝ ռուսական երկրորդային շուկայից ձեռք բերվող ավտոմեքենա: Վարկի գրավի պահանջի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

10. ***«3.2. Երաշխավորություն»*** տողում լրացվում են երաշխավոր անձի (անձանց) թիվը և նրա (նրանց) նկատմամբ պահանջները: Օրինակ՝ 2 ֆիզիկական անձինք, որոնք վերջին 5 տարում ունեցել են լավ վարկային պատմություն: Երաշխավորի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

11. ***«4.1. Վարկ/գրավ հարաբերակցություն»*** տողում լրացվում է «Վարկ հարաբերած գրավի արժեք» առավելագույն ցուցանիշը՝ տոկոսային արտահայտությամբ: Օրինակ՝ առավելագույնը 80: Վարկի գրավի պահանջի բացակայության դեպքում համապատասխան տողում դրվում է՝ Չի պահանջվում:

12. ***«4.2. Մայր գումարի մարումների հաճախականություն»*** և ***«4.2. Տոկոսագումարի մարումների հաճախականություն»*** տողերում համապատասխանաբար լրացվում են վարկի մայր գումարի և տոկոսագումարի մարման պարբերականությունները (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան և այլ): Եթե վարկատուի կողմից նախատեսված է վարկի մարման «այլ» պարբերականություն, ապա նշվում են պարբերականությունը և ձևը:

13. ***«4.3. Կանխավճար/վարկ հարաբերակցություն»*** տողում լրացվում են վարկի կանխավճարի նվազագույն և առավելագույն արժեքները՝ տոկոսային արտահայտությամբ: Օրինակ՝ 40-80: Կանխավճարի չափ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում: Վարկի կանխավճարի նվազագույն չափ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ առավելագույնը «սահմանված առավելագույն արժեքը»: Օրինակ՝ առավելագույնը 80: Վարկի կանխավճարի առավելագույն չափ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ սկսած «սահմանված նվազագույն արժեքից»: Օրինակ՝ սկսած 40-ից:

14. ***«5.1. Վարկային հայտի ուսումնասիրության»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 25,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Վարկային հայտի ուսումնասիրության վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

15. ***«5.2. Վարկի սպասարկման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի նկատմամբ) և պարբերականությունը (ամսական, տարեկան և այլն):

Օրինակ՝ 125,000 ՀՀ դրամ, տարեկան կամ 5% մնացորդի նկատմամբ, տարեկան: Վարկի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

16. ***«5.3. Գրավի գնահատման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Գրավի բացակայության կամ գրավի գնահատման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

17. ***«5.4. Նոտարական վավերացման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 15,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Նոտարական վավերացման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

18. ***«5.5. Գրավի ապահովագրության»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի, գույքի արժեքի, մնացորդի և տոկոսագումարների նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ, տարեկան և այլն): Օրինակ՝ 250,000 ՀՀ դրամ, տարեկան: Գրավի բացակայության կամ գրավի ապահովագրման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

19. ***«5.6. Այլ միջնորդավճարներ»*** տողում այլ միջնորդավճարների առկայության դեպքում լրացվում են տվյալ վճարի անվանումը, գանձման չափը և պարբերականությունը: Այլ միջնորդավճարներ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

20. Եթե 5.1-5.6-րդ կետերով սահմանված վճարների համար հնարավոր չէ լրացնել վճարի չափը, ապա համապատասխան տողում լրացվում են տվյալ վճարի նվազագույն և առավելագույն արժեքները:

21. ***«5.7. Ընդամենը այլ վճարներ»*** տողում լրացվում է այլ վճարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 560,000 ՀՀ դրամ: Այն դեպքում, երբ SՓS-ի և 5.1-5.6-րդ կետերով սահմանված վճարների համար լրացվել են նվազագույն և առավելագույն արժեքներ, ապա լրացվում են այլ վճարների ընդհանուր գումարի նվազագույն և առավելագույն արժեքները:

22. ***«7.1. Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի մայր գումարը չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: 3 և ավելի աշխատանքային օր ուշացման դեպքում՝ ժամկետանց վարկի մնացորդի 2%, օրական:

23. ***«7.2. Տոկոսագումարները չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի տոկոսագումարները չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ ժամկետանց վարկի մնացորդի 0.1%, օրական:

24. ***«7.3. Այլ վճարները չկատարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի գծով պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող այլ տույժ/տուգանքները և դրանց չափը: Այլ տույժ/տուգանք սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

25. ***«8. Փաստաթղթերի ցանկ»*** մասում լրացվում են այն հիմնական փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են վարկի ստացման համար:

26. ***«9. Վարկային հայտ»*** մասում լրացվում է վարկատուի կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը օրերով, վարկային հայտ ներկայացնողին որոշման մասին տեղեկացնելու և վարկատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու հետո վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը օրերով:»:

Վարկատուի լոգո (սեղմել և բեռնել)

ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ (ՕՎԵՐԴՐԱՖՏԻ) ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գործողության սկիզբ | Ավարտ

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ**, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

1.

Վարկատուի անվանումը	
Գրվելու վայր	
Հեռ.	
Էլ. փոստ	

2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Վարկի անվանում		
2.2 Վարկի գումար		
2.3 Վարկի ժամկետ		*ամիս*
2.4 Տարեկան անվանական տոկոսադրույք (ՏԱՏ)		

Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:

2.5 Տարեկան փաստացի տոկոսադրույք (ՏՓՏ)	

Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելի, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:

3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

☐ 3.1 Գրավ		☐ 3.2 Երաշխավորություն	

4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն	%	4.3 Հաշվի նվազագույն շարժ և վճարման կարգ	
4.2 Արտոնյալ ժամկետ *(Գրեյս պերիոդ)*		4.4 Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք	

5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

5.1 Վարկային հայտի ուսումնասիրության		5.5 Գրավի ապահովագրության	
5.2 Վարկի սպասարկման		5.6 Քարտի սպասարկման	
5.3 Գրավի գնահատման		5.7 Կանխիկացման *(վարկատուի բանկոմատներից կանխիկացման)*	
5.4 Նոտարական վավերացման		5.8 Այլ միջնորդավճարներ	

5.9 Ընդամենը այլ վճարներ	

Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար

6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):

Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒԺԴ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում

7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում

7.3 Այլ վճարներ

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ ____ օր

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ ____ օր

Վարկը տրամադրելու ժամկետ ____ օր *(պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո)*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»,
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

ԻՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մովսես Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

Վարկային գծի (օվերդրաֆտի) էական պայմանների ընդհանրական թերթիկի (այսուհետ՝ Ընդհանրական թերթիկ) լրացման ուղեցույց

Սույն ուղեցույցը չի տրամադրվում վարկառուին:

1. ***Ընդհանրական թերթիկը*** տրամադրվում է միայն 10,000,000 ՀՀ դրամը չգերազանցող վարկերի համար:

2. ***«Գործողության սկիզբ»*** և ***«Ավարտ»*** տողերում լրացվում են տվյալ թերթիկի պայմանների գործողության սկիզբը և ավարտը՝ օր/ամիս/տարի ձևաչափով: Գործողության ժամկետներ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ Չի սահմանվում:

3. ***«1. Վարկատուի վերաբերյալ»*** վանդակում լրացվում են վարկատուի անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, փոստային հասցեն(երը) (օրինակ՝ ՀՀ, Երևան, Նորք-Մարաշ, Աբգ 11), հեռախոսահամար(ներ)ը (օրինակ՝ +(37410) 123456) և էլեկտրոնային հասցեն(երը), որոնցով վարկառուն կարող է սպառիչ տեղեկություններ ստանալ տրամադրվող վարկի վերաբերյալ: Ընդ որում, եթե առկա է կենտրոնացված բեժ գիծ, ապա նշվում է բեժ գծի հեռախոսահամարը, եթե ոչ՝ նշվում է այն հեռախոսահամարը, որի միջոցով վարկառուն կարող է առանց խոչընդոտների կապ հաստատել վարկատուի հետ:

4. ***«2.1. Վարկի անվանում»*** տողում լրացվում են վարկատուի կողմից տրամադրվող սպառողական վարկի անվանումը և տեսակը: Օրինակ՝ «Էքսպրես» վերականգնվող վարկային գիծ:

5. ***«2.2. Վարկի գումար»*** տողում լրացվում են վարկի գումարի նվազագույն և առավելագույն արժեքները: Օրինակ՝ 500,000-10,000,000 ՀՀ դրամ կամ աշխատավարձի մինչև 200%-ը, բայց առավելագույնը 250.000 ՀՀ դրամ: Վարկի նվազագույն չափ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ առավելագույնը «սահմանված առավելագույն գումարը»: Օրինակ՝ առավելագույնը 10,000,000 ՀՀ դրամ: Վարկի առավելագույն չափ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ սկսած «սահմանված նվազագույն գումարից»: Օրինակ՝ սկսած 500,000 ՀՀ դրամից:

6. ***«2.3. Վարկի ժամկետ»*** տողում լրացվում են վարկի նվազագույն և առավելագույն ժամկետները ամիսներով: Օրինակ՝ 3-24: Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ առավելագույնը «սահմանված առավելագույն ժամկետը»: Օրինակ՝ առավելագույնը 24: Վարկի առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ սկսած «սահմանված նվազագույն ժամկետից»: Օրինակ՝ սկսած 3-ից:

7. ***«2.4. Տարեկան անվանական % (SUS)»*** տողում լրացվում է վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը: Տվյալ վարկի համար տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն արժեքներ սահմանված լինելու դեպքում լրացվում են SUS-ի նվազագույն և առավելագույն արժեքները: Օրինակ՝ 11-15:

8. ***«2.5. Տարեկան փաստացի % (SΦS)»*** տողում լրացվում է վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ SUS-ի և 5.1-5.6-րդ կետերով սահմանված վճարների համար լրացվել են նվազագույն և առավելագույն արժեքներ, ապա լրացվում են SΦS-ի նվազագույն և առավելագույն արժեքները: Օրինակ՝ 25,4-40:

9. ***«3.1. Գրավ»*** տողում լրացվում են վարկի ապահովման միջոց հանդիսացող գրավի տեսակ(ներ)ը և դրա(նց) նկատմամբ պահանջները: Օրինակ՝ ռուսական՝ երկրորդային շուկայից ձեռք բերվող ավտոմեքենա: Վարկի գրավի պահանջի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

10. ***«3.2. Երաշխավորություն»*** տողում լրացվում են երաշխավոր անձի (անձանց) թիվը և նրա (նրանց) նկատմամբ պահանջները: Օրինակ՝ 2 ֆիզիկական անձ, որոնք վերջին 5 տարում ունեցել են լավ վարկային պատմություն: Երաշխավորի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

11. ***«4.1. Վարկ/գրավ հարաբերակցություն»*** տողում լրացվում է «Վարկ հարաբերած գրավի արժեք» առավելագույն ցուցանիշը՝ տոկոսային արտահայտությամբ: Օրինակ՝ առավելագույնը 80: Վարկի գրավի պահանջի բացակայության դեպքում համապատասխան տողում դրվում է՝ Չի պահանջվում:

12. ***«4.2. Արտոնյալ ժամկետ (Գրեյս պերիոդ)»*** տողում լրացվում են վարկի համար սահմանված արտոնյալ ժամկետը և կիրառման դեպքը: Օրինակ՝ վարկի կանխիկացմանը հաջորդող 15 օրվա ընթացքում վարկը օգտագործելու դեպքում տոկոսագումար չի գանձվում կամ վարկի կանխիկացումից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը վարկը օգտագործելու դեպքում տոկոսագումար չի գանձվում: Արտոնյալ ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի սահմանվում:

13. ***«4.3. Հաշվի նվազագույն շարժ և վճարման կարգ»*** տողում լրացվում են հաշվի նվազագույն շարժը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս, և այդ գումարի վճարման կարգը (պարբերականությունը): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ կամ 5% օգտագործված մասի նկատմամբ վճարում մինչև հաջորդ ամսվա 10-ը: Հաշվի նվազագույն շարժ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

14. ***«4.4. Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող %»*** տողում լրացվում է վարկի չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքը: Օրինակ՝ 13: Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող % սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ Չի սահմանվում:

15. ***«5.1. Վարկային հայտի ուսումնասիրության»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝

25,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Վարկային հայտի ուսումնասիրության վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

16. ***«5.2. Վարկի սպասարկման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի նկատմամբ) և պարբերականությունը (ամսական, տարեկան և այլն): Օրինակ՝ 125,000 ՀՀ դրամ, տարեկան կամ 5% մնացորդի նկատմամբ, տարեկան: Վարկի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

17. ***«5.3. Գրավի գնահատման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Գրավի բացակայության կամ գրավի գնահատման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

18. ***«5.4. Նոտարական վավերացման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 15,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Նոտարական վավերացման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

19. ***«5.5. Գրավի ապահովագրության»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի, գույքի արժեքի, մնացորդի և տոկոսագումարների նկատմամբ), և պարբերականությունը (միանվագ, տարեկան և այլն): Օրինակ՝ 250,000 ՀՀ դրամ, տարեկան: Գրավի բացակայության կամ գրավի ապահովագրման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

20. ***«5.6. Քարտի սպասարկման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար և պարբերականությունը (ամսական, տարեկան և այլն): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ, տարեկան: Քարտի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

21. ***«5.7. Կանխիկացման (վարկատուի բանկոմատներից կանխիկացման)»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս: Օրինակ՝ 500 ՀՀ դրամ կամ 3% կամ 1%, նվազագույնը 300 ՀՀ դրամ: Կանխիկացման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

22. ***«5.8. Այլ միջնորդավճարներ»*** տողում այլ միջնորդավճարների առկայության դեպքում լրացվում են տվյալ վճարի անվանումը, գանձման չափը և պարբերականությունը: Այլ միջնորդավճարներ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

23. Եթե 5.1-5.8-րդ կետերով սահմանված վճարների համար հնարավոր չէ լրացնել վճարի չափը, ապա համապատասխան տողում լրացվում են տվյալ վճարի նվազագույն և առավելագույն արժեքները:

24. ***«5.9. Ընդամենը այլ վճարներ»*** տողում լրացվում է այլ վճարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 560,000 ՀՀ դրամ: Այն դեպքում, երբ ՏՓՏ-ի և 5.1-5.6-րդ կետերով սահմանված վճարների համար լրացվել է նվազագույն և առավելագույն արժեքները, ապա լրացվում է այլ վճարների ընդհանուր գումարի նվազագույն և առավելագույն արժեքները:

25. ***«7.1. Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի մայր գումարը չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ 3 և ավելի աշխատանքային օր ուշացման դեպքում՝ ժամկետանց վարկի մնացորդի 2%, օրական:

26. ***«7.2. Տոկոսագումարները չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի տոկոսագումարները չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ ժամկետանց վարկի մնացորդի 0.1%, օրական:

27. ***«7.3. Այլ վճարներ»*** տողում լրացվում են տվյալ վարկի գծով պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող այլ տույժ/տուգանքները և դրանց չափը: Այլ տույժ/տուգանք սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

28. ***«8. Փաստաթղթերի ցանկ»*** մասում լրացվում են այն հիմնական փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են վարկի ստացման համար:

29. ***«9. Վարկային հայտ»*** մասում լրացվում են վարկատուի կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը օրերով, վարկային հայտ ներկայացնողին որոշման մասին տեղեկացնելու և վարկատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու հետո վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը օրերով:»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով պարզեցնել ընկերությունների կողմից առաջարկվող պայմանագրերը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 20-ի ««Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Բանկի և ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգը լրացնել նոր 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն կանոնակարգով սպառողական վարկի էական պայմանների ընդհանրական և անհատական թերթիկներին ներկայացվող պահանջները չեն կիրառվում գրավատների նկատմամբ:»,

2) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել նոր՝ 17-րդ, 18-րդ և 19-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«17) ***«Սպառողական վարկի էական պայմանների ընդհանրական թերթիկ (այսուհետ՝ Ընդհանրական թերթիկ)»*** ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ կրեդիտի գծով բոլոր հաճախորդների համար կիրառելի՝ կրեդիտի էական պայմանները, սակագները, սպառողի իրավունքն ու պարտավորությունները և ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները:

18) ***«Սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ (այսուհետ՝ Անհատական թերթիկ)»*** ՝փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ կրեդիտի գծով կրեդիտավորման պայմանագրի կնքման դեպքում տվյալ սպառողի համար կիրառելի՝ կրեդիտի էական պայմանները, սակագները, սպառողի իրավունքն ու պարտավորությունները և ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները:

19) ***«Կրեդիտային հայտ»*** ՝կրեդիտի ստացման համար սպառողի կողմից կրեդիտավորողին գրավոր կամ էլեկտրոնային ձևով ներկայացված հայտ (դիմում):»,

3) Կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետը «շփոթեցուցիչ» բառից հետո լրացնել «(օրինակ՝ խուսափել այնպիսի բառերի օգտագործումից, ինչպիսին «կետանց» բառն է),» բառերով,

4) Կանոնակարգի 4-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) ընկերությունն ապահովում է, որ իր կողմից բացահայտվող տեղեկատվությունը ներկայացվի ճշգրիտ, արժանահավատ և ժամանակին:»,

5) Կանոնակարգի 5-րդ կետի 10-րդ ենթակետում «և» բառը փոխարինել «: Ընդ որում, ընկերությունը պարզաբանումների հետ մեկտեղ» բառերով,

6) Կանոնակարգի 6-րդ կետը լրացնել նոր 4-րդ և 5-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) հաճախորդի պահանջով տրամադրում է Ընդհանրական թերթիկ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի,

5) կրեդիտային հայտի վերաբերյալ դրական որոշման կայացումից հետո տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն սույն կանոնակարգի 8-րդ գլխի:»,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. նոյեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.12.2014 թ. (ՀՀԳՏ N32 (511), 15.126.2014):

7) Կանոնակարգի 11-րդ կետի 15-րդ ենթակետի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին» բառերը փոխարինել «վարկային բյուրոյին» բառերով,
8) Կանոնակարգի 11-րդ կետի 15-րդ ենթակետում «տրամադրելու վերաբերյալ» բառերից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«: Ընդ որում, վարկային բյուրոյի վերաբերյալ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով և (կամ), այլ ձևով (Օրինակ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԿԱՏԱՐՄԱՆ, ԹԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ),»,

9) Կանոնակարգի 11-րդ կետը լրացնել նոր 19-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«19) եթե պայմանագրում հղում է կատարվում պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններին (օրինակ՝ ներքին իրավական ակտերին, ծառայության ընդհանուր պայմաններին), ապա առնվազն նշվում է այդ պայմանների նույնականացման տվյալները՝ պայմանների ընդունման ամսաթիվը, նույնականացման կամ հաշվառման համարը և ընդունող մարմնի անվանումը: Այն դեպքում, երբ հղում է կատարվում այլ մարմնի կողմից հաստատված պայմաններին և հնարավոր չէ նշել նույնականացման տվյալներ, ապա առնվազն նշվում է այն ժամկետը, որի համար գործում են այդ պայմանները: Եթե պայմանագրում նշված պայմանները հրապարակային են, ապա հղում է կատարվում նաև համապատասխան աղբյուրին (ինտերնետային էջ/բաժին/ենթաբաժին), եթե պայմանները ոչ հրապարակային են, ապա տրամադրվում է վավերացված թղթային օրինակը:

Ընդ որում, նշվում է նաև այդ պայմանների փոփոխության մասին հաճախորդներին ծանուցելու վայրը և ժամկետները:»,

10) Կանոնակարգի 15-րդ կետի 5-րդ ենթակետը «փոփոխության» բառից հետո լրացնել «ներառյալ՝ վարկային բյուրո տվյալները ուղարկելու» բառերով,
11) Կանոնակարգը լրացնել նոր 16.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
12) «16.1. Կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում սույն կանոնակարգի 15-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված փոփոխությունների դեպքում սպառողի պահանջով կրեդիտավորողը տրամադրում է նոր Անհատական թերթիկ սույն կանոնակարգի 31-րդ կետով սահմանված կարգով:

Այն դեպքում, երբ կրեդիտավորողի կողմից կրեդիտավորման պայմանագիրը երկարաձգվում է միակողմանիորեն կրեդիտավորողի գործող նոր պայմաններով, ապա կրեդիտավորողը տրամադրում է նոր Անհատական թերթիկ սույն կանոնակարգի 30-35-րդ կետերով սահմանված կարգով:»,

13) Կանոնակարգի 23-րդ կետի 11-րդ ենթակետը «դրանց չափը,» բառերից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ինչպես նաև սպառողի վերաբերյալ տեղեկատվությունը վարկային բյուրոյին տրամադրելու վերաբերյալ: Ընդ որում, վարկային բյուրոյի վերաբերյալ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով (Օրինակ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԿԱՏԱՐՄԱՆ, ԹԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ:»,

14) Կանոնակարգը լրացնել նոր գլուխ 8-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 8
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ (ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ)

28. Սպառողի կրեդիտային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո կրեդիտավորողն իր կողմից առաջարկվող կրեդիտի պայմանների և սպառողի կողմից տրված փաստաթղթերի հիման վրա նախքան կրեդիտավորման պայմանագրի կնքումը սպառողին տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի (վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում՝ համաձայն Հավելված 3-ի):

29. Կրեդիտավորողը՝

1) ապահովում է Անհատական թերթիկում ներառված պայմանների համապատասխանությունը կրեդիտավորման պայմանագրի դրույթներին,

2) ապահովում է Անհատական թերթիկի տրամադրումը ժամանակին, այսինքն՝ մինչև կրեդիտավորման պայմանագրի կնքումը սպառողը հնարավորություն է ունենում ծանոթանալու կրեդիտի

էական պայմաններին և, ցանկության դեպքում, համեմատելու այլ կրեդիտավորողների կողմից առաջարկվող կրեդիտի էական պայմանների հետ,

3) բանավոր պարզաբանում է Անհատական թերթիկի էությունը և դրա կարևորությունը,

4) բանավոր տեղեկացնում է Անհատական թերթիկի գործողության ժամկետի վերաբերյալ,

5) Անհատական թերթիկի ստորագրման ժամանակ որևէ կերպ չի ուղղորդում սպառողին, սակայն հուշում է ստորագրությունների քանակը:

30. Կրեդիտավորողը հաստատված պայմանների հիման վրա լրացնում է Անհատական թերթիկը, ստորագրում է և սպառողի նախընտրած եղանակով (առձեռն՝ կրեդիտավորողի տարածքում, փոստային կապի միջոցով, էլեկտրոնային փոստով) տրամադրում կամ ուղարկում է վերջինիս:

31. Փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային փոստով ընտրելու դեպքում կրեդիտավորողն Անհատական թերթիկը սպառողին (երաշխավորին) ուղարկում է կրեդիտային հայտի հաստատումից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Կրեդիտավորողի տարածքում առձեռն եղանակով ընտրելու դեպքում կրեդիտավորողն Անհատական թերթիկը տրամադրում է սպառողին (երաշխավորին) վերջինիս՝ Կրեդիտավորողի տարածք առաջին իսկ այցի դեպքում:

32. Կրեդիտավորողն առնվազն երեք տարի պահպանում է Անհատական թերթիկի տրամադրման փաստն ապացուցող փաստաթղթերը (օրինակ՝ սպառողի ստորագրությամբ տրված ստացականը, նամակն ուղարկելու փաստն ապացուցող փաստաթուղթը, էլեկտրոնային փոստի ծանուցման հաղորդագրությունը):

33. Եթե սպառողը (երաշխավորը (առկայության դեպքում)) համաձայն է Անհատական թերթիկի հետ, ապա ստորագրում է Անհատական թերթիկների երկու (երաշխավորի առկայության դեպքում երեք) օրինակները և վերադարձնում կրեդիտավորողին առձեռն՝ կրեդիտավորողի տարածքում:

34. Ստորագրված Անհատական թերթիկներից մեկ օրինակը տրամադրվում է սպառողին, իսկ մյուսը ենթակա է արխիվացման կրեդիտավորողի կողմից: Երաշխավորի առկայության դեպքում Անհատական թերթիկներից երրորդ օրինակը տրամադրվում է երաշխավորին:

35. Անհատական թերթիկի պայմանները գործում են կրեդիտային հայտի դրական որոշման վերաբերյալ սպառողին տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օր: Եթե սպառողը ստորագրված թերթիկը կրեդիտավորողին ներկայացնում է սահմանված ժամկետից ուշ, ապա կրեդիտավորողը իր ներքին իրավական ակտերի համաձայն ինքն է որոշում ընդունել թերթիկը և կնքել կրեդիտավորման պայմանագիրը այդ պայմաններով, թե ոչ:

36. Անհատական թերթիկը ներառում է հետևյալ տեղեկությունները.

1) Անհատական թերթիկի՝ կրեդիտավորողի կողմից լրացվող հերթական համարը և կրեդիտային հայտի դրական որոշման վերաբերյալ սպառողին տեղեկացման ամսաթիվը,

2) կրեդիտավորողի լրիվ անվանումը և կապի միջոցները (հեռախոսահամար, հասցե, էլեկտրոնային փոստի հասցե),

3) սպառողի վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես՝ անուն, ազգանունը և կապի միջոցները,

4) կրեդիտի էական պայմանները, այդ թվում՝

ա. կրեդիտի տեսակը,

բ. կրեդիտի գումարի չափը,

գ. կրեդիտի տրամադրման ժամկետը,

դ. կրեդիտի անվանական տարեկան տոկոսադրույքի չափը,

ե. կրեդիտի տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը, ընդ որում, տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով նշում, որում բացատրվում է անվանական և տարեկան փաստացի տոկոսադրույքների տարբերությունը,

5) կրեդիտի հետ կապված վճարները, այդ թվում՝

ա. կրեդիտի մարման ընդհանուր վճարը, որն իրենից ներկայացնում է կրեդիտի մայր գումարի, տոկոսագումարների ու այլ վճարումների ընդհանուր գումարը, որը սպառողը պարտավոր է վճարել (կատարել) կրեդիտի ստացման համար,

բ. այլ վճարումները,

6) եթե սպառողի պարտավորությունների կատարումն ապահովված է գրավով և (կամ) երաշխավորությամբ, ապա ապահովվածության մասում ներկայացվում է՝

ա. գրավի տեսակը,

բ. նշում երաշխավորի մասին,

7) այլ պայմանները, այդ թվում՝

ա. մայր գումարի և տոկոսագումարների մարումների հաճախականությունը (չի կիրառվում վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում),

բ. կանխավճարի չափը (առկայության դեպքում) (չի կիրառվում վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում),

գ. վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում՝ արտոնյալ ժամկետը («գրեյս պերիոդ»), հաշվի նվազագույն շարժը և վճարման կարգը, չօգտագործված միջոցների դիմաց հաշվարկված տոկոսադրույքը,

8) սպառողի իրավունքներ մասում ներկայացվում են տեղեկություններ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրեդիտավորման պայմանագիրը լուծելու՝ սպառողի իրավունքի և 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու՝ սպառողի իրավունքի վերաբերյալ,

9) սպառողի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքները մասում ներկայացվում է պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը և կիրառման դեպքերը, ինչպես նաև նշում սպառողի կողմից պարտավորությունների կատարման դեպքում մարումների հերթականության և այլ հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ, այդ թվում՝

ա. գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ,

բ. վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում վարկառուի այլ գույքի հաշվին պարտավորությունների մարման հնարավորության վերաբերյալ,

գ. վարկառուի վերաբերյալ տեղեկատվությունը «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով վարկային բյուրոյին տրամադրման վերաբերյալ,

10) նշում այն մասին, որ Անհատական թերթիկը չի փոխարինում և չի հանդիսանում կրեդիտավորման պայմանագրի մաս, և սպառողը պետք է առաջնորդվի պայմանագրով,

11) երաշխավորության վերաբերյալ բացատրական տեղեկատվությունը:

37. Անհատական թերթիկում տվյալները լրացվում են լրացման ուղեցույցի օգնությամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի: Վարկային գծերի (օվերդրաֆտների) Անհատական թերթիկը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի: Լրացման ուղեցույցը նախատեսված է միայն ընկերության համար և չի տրամադրվում սպառողին:

38. Կրեդիտավորողը չի կարող փոխել Անհատական թերթիկի տեքստը և դիզայնը, սակայն կարող է ավելացնել իր լոգոն՝ ելնելով մարքեթինգային քաղաքականությունից:

39. Այն դեպքում, երբ մեկ կրեդիտը տրամադրվում է մեկից ավելի անձանց, ապա կրեդիտավորողը Անհատական թերթիկի մեկական օրինակ տրամադրում է յուրաքանչյուր սպառողին՝ սույն գլխով սահմանված կարգով:

40. Այն դեպքում, երբ սպառողի պարտավորությունների կատարումն ապահովված է մեկից ավելի անձանց երաշխավորությամբ, ապա կրեդիտավորողը Անհատական թերթիկի մեկական օրինակ տրամադրում է յուրաքանչյուր երաշխավորին՝ սույն գլխով սահմանված կարգով:»:

15) Կանոնակարգը լրացնել Հավելված 1-ով, Հավելված 2-ով, Հավելված 3-ով և Հավելված 4-ով՝ համաձայն սույն որոշման՝ համապատասխանաբար Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 3-ի և Հավելված 4-ի (կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի փետրվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 նոյեմբերի 2014 թ., N 310-Ն

Վարկատուի լոգո (սեղմել և բեռնել)

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ,** որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան նույն վարկի համար Ձեզ տրամադրված ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

1.1 Թերթիկի համար

1.2 Վարկային հպգի դրական որոշման մասին վարկառուին տեղեկացման ամսաթիվ

3. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Վարկի անվանում		
3.2 Վարկի գումար		ՀՀ դրամ
3.3 Վարկի ժամկետ		ամիս
3.4 Տարեկան անվանական տոկոսադրույք (ՏԱՏ)		

Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:

3.5 Տարեկան փաստացի տոկոսադրույք (ՏՓՏ)		

Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելի, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:

2.1

Վարկատուի անվանումը	
Գրնվելու վայր	
Հեռ.	
Էլ. փոստ	

2.2

Վարկառուի անուն, ազգանուն	
Բնակության վայր	
Հեռ.	
Էլ. փոստ	
Վարկատուի հետ հաղորդակցման եղանակ	

վարկառուի ստորագրություն *երաշխավորի ստորագրություն*

4. ՎԱՐԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ

4.1 Վարկի մարման ընդհանուր վճար *(վարկի մայր գումար+տոկոսագումար +այլ վճարներ)*		ՀՀ դրամ
4.2 Վարկի տոկոսագումարների ընդհանուր վճար		ՀՀ դրամ
4.3 Այլ վճարներ *(7-րդ կետով սահմանված բոլոր այլ վճարների ընդհանուր գումարը)*		ՀՀ դրամ

5. ԱՊԱՀՈՎԱԾՈՒԹՅՈՒՆ

☐ 5.1 Գրավ	
☐ 5.2 Երաշխավորություն	

7. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

7.1 Վարկային հայտի ուսումնասիրության	
7.2 Վարկի սպասարկման	
7.3 Գրավի գնահատման	
7.4 Նոտարական վավերացման	
7.5 Գրավի ապահովագրության	
7.6 Այլ միջնորդավճարներ	

վարկառուի ստորագրություն *երաշխավորի ստորագրություն*

6. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Մարումների հաճախականություն

○ Մայր գումար	
○ Տոկոսագումար	
Այլ հաճախականության դեպքում նշել ձևը	
6.2 Կանխավճար	ՀՀ դրամ

ՍՈՒՅՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՁԵՋ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ 10 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ:
ՍՈՒՅՆ ԹԵՐԹԻԿԸ ՉԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ:
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԴՐՈՒՅԹԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ՁԵՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴԻՄԵԼ ՎԱՐԿԱՏՈՒԻՆ՝ ՊԱՐՉԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):

Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒԺԴ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում	
7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում	
7.3 Այլ վճարներ	

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

○		○	
○		○	
○		○	
○		○	

9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ		օր
Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ		օր
Վարկը տրամադրելու ժամկետ	օր	*(պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո)*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»,
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

ԻՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մովսես Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

»

Սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկի (այսուհետ՝ Անհատական թերթիկ) լրացման ուղեցույց

Սույն ուղեցույցը չի տրամադրվում վարկառուին:

1. Անհատական թերթիկը տրամադրվում է միայն 10,000,000 դրամը չգերազանցող վարկերի համար:

2. *«**1.1. Թերթիկի համար»*** տողում լրացվում է վարկատուի կողմից տրամադրվող Անհատական թերթիկի հերթական համարը:

3. ***«1.2. Վարկային հայտի դրական որոշման մասին վարկառուին տեղեկացման ամսաթիվ»*** տողում լրացվում է վարկատուի կողմից վարկառուին վարկային հայտի դրական որոշման մասին տեղեկացման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:

4. ***«2.1. Վարկատուի վերաբերյալ»*** վանդակում լրացվում են վարկատուի անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, փոստային հասցեն(երը) (օրինակ՝ ՀՀ, Երևան, Նորք-Մարաշ, Աբգ 11), հեռախոսահամար(ներ)ը (օրինակ՝ +(37410) 123456) և էլեկտրոնային հասցեն(երը), որոնցով վարկառուն կարող է սպառիչ տեղեկություններ ստանալ տրամադրվող վարկի վերաբերյալ: Ընդ որում, եթե առկա է կենտրոնացված թեժ գիծ, ապա նշվում է թեժ գծի հեռախոսահամարը, եթե ոչ՝ նշվում է այն հեռախոսահամարը, որի միջոցով վարկառուն կարող է առանց խոչընդոտների կապ հաստատել վարկատուի հետ:

5. ***«2.2. Վարկառուի վերաբերյալ»*** վանդակում լրացվում են վարկառուի անունը, ազգանունը, փոստային հասցեն(երը), հեռախոսահամար(ներ)ը և էլեկտրոնային հասցեն(երը), որոնցով վարկատուն կարող է կապ հաստատել վարկառուի հետ, ինչպես նաև վարկառուի՝ վարկատուի հետ հաղորդակցման նախընտրելի եղանակը: Օրինակ՝ էլ. փոստ:

6. ***«3.1. Վարկի անվանում»*** տողում լրացվում են վարկատուի կողմից տրամադրվող սպառողական վարկի անվանումը և տեսակը: Օրինակ՝ «Էքսպրես վարկ» սպառողական վարկ:

7. ***«3.2. Վարկի գումարը»*** տողում լրացվում է վարկի գումարի արժեքը: Օրինակ՝ 800,000:

8. ***«3.3. Վարկի ժամկետ»*** տողում լրացվում է վարկի ժամկետը ամիսներով: Օրինակ՝ 24:

9. ***«3.4. Տարեկան անվանական % (ՏԱՏ)»*** տողում լրացվում է վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը: Օրինակ՝ 18:

10. ***«3.5. Տարեկան փաստացի % (ՏՓՏ)»*** տողում լրացվում է վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը: Օրինակ՝ 19,70:

11. ***«4.1. Վարկի մարման ընդհանուր վճար»*** տողում լրացվում է վարկի մայր գումարի, տոկոսագումարների և այլ վճարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 920,000:

12. ***«4.2. Տոկոսագումարների ընդհանուր վճար»*** տողում լրացվում է վարկի տոկոսագումարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 700,000:

13. ***«4.3. Այլ վճարներ»*** տողում լրացվում է 7.1-7.6-րդ կետերով սահմանված այլ վճարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 65,000:

14. ***«5.1. Գրավ»*** տողում լրացվում են վարկի ապահովման միջոց հանդիսացող գրավի տեսակ(ներ)ը և նկարագրությունը: Օրինակ՝ 2014 թ. «ԱԲԳՂ» մակնիշի ավտոմեքենա: Վարկի գրավի պահանջի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

15. ***«5.2. Երաշխավորություն»*** տողում լրացվում են երաշխավոր(ներ)ի անունը և ազգանունը: Վարկի երաշխավորի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

16. ***«6.1. Մայր գումարի մարումների հաճախականություն»*** և ***«6.1. Տոկոսագումարի մարումների հաճախականություն»*** տողերում համապատասխանաբար լրացվում են վարկի մայր գումարի և տոկոսագումարի մարման պարբերականությունները (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան և այլ): Եթե վարկատուի կողմից նախատեսված է վարկի մարման «այլ» պարբերականություն, ապա նշվում է պարբերականությունը և ձևը:

17. ***«6.2. Կանխավճար»*** տողում լրացվում է վարկի կանխավճարի գումարի չափը: Օրինակ՝ 50,000: Կանխավճարի չափ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

18. ***«7.1. Վարկային հայտի ուսումնասիրության»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 25,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Վարկային հայտի ուսումնասիրության վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

19. ***«7.2. Վարկի սպասարկման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի նկատմամբ) և պարբերականությունը (ամսական, տարեկան և այլն): Օրինակ՝ 125,000 ՀՀ դրամ, տարեկան կամ 5% մնացորդի նկատմամբ, տարեկան: Վարկի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

20. ***«7.3. Գրավի գնահատման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ, միա-

նվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Գրավի բացակայության կամ գրավի գնահատման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

21. ***«7.4. Նոտարական վավերացման»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ) և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 15,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Նոտարական վավերացման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

22. ***«7.5. Գրավի ապահովագրության»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի, գույքի արժեքի, մնացորդի և տոկոսագումարների նկատմամբ), և պարբերականությունը (միանվագ, տարեկան և այլն): Օրինակ՝ 250,000 ՀՀ դրամ, տարեկան: Գրավի բացակայության կամ գրավի ապահովագրման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

23. ***«7.6. Այլ միջնորդավճարներ»*** տողում այլ միջնորդավճարների առկայության դեպքում լրացվում են տվյալ վճարի անվանումը, գանձման չափը և պարբերականությունը: Այլ միջնորդավճարներ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

24. ***«9.1. Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի մայր գումարը չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ 3 և ավելի աշխատանքային օր ուշացման դեպքում՝ ժամկետանց վարկի մնացորդի 2%, օրական:

25. ***«9.2. Տոկոսագումարները չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի տոկոսագումարները չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ ժամկետանց վարկի մնացորդի 0.1%, օրական:

26. ***«9.3. Այլ վճարները չկատարելու դեպքում»*** տողում լրացվում է տվյալ վարկի գծով պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող այլ տույժ/տուգանքների չափը: Այլ տույժ/տուգանք սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

27. ***«9.4. Մարումների հերթականություն»*** վանդակում լրացվում է վարկառուի կողմից պարտավորությունների մարման հերթականությունը (տույժ/տուգանքներ, տոկոսագումարներ, մայր գումար):

28. ***«Հաստատում եմ, որ սույն թերթիկում ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են»*** վանդակում պարտադիր դրվում են վարկատուի պատասխանատու անձի ստորագրությունը և վարկառուին թերթիկի տրամադրման ամսաթիվը: Թերթիկը փոստային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով վարկառուին ուղարկելու դեպքում լրացվում է թերթիկի ուղարկման ամսաթիվը: Թերթիկը վարկառուին առձեռն տրամադրելու դեպքում լրացվում է թերթիկի փաստացի տրամադրման ամսաթիվը:

29. ***«Հաստատում եմ, որ նախքան պայմանագրի կնքումը ստացել և հասկացել եմ սույն թերթիկում ներկայացված բոլոր տեղեկությունները»*** վանդակում պարտադիր դրվում են վարկառուի ստորագրությունը և ստորագրման ամսաթիվը: Երաշխավորի առկայության դեպքում դրվում են նաև երաշխավորի ստորագրությունը և ստորագրման ամսաթիվը:»:

Վարկատուի լոգո (տեղադրել և բեռնել)

ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ (ՕՎԵՐԴՐԱՖՏԻ) ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ,** որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան նույն վարկի համար Ձեզ տրամադրված ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

1.1 Թերթիկի համար

1.2 Վարկային հպգիծ դրական որոշման մասին վարկառուին տեղեկացման

3. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Վարկի անվանում

3.2 Վարկի գումար

3.3 Վարկի ժամկետ — ամիս

3.4 Տարեկան անվանական տոկոսադրույք (ՏԱՏ)

Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:

3.5 Տարեկան փաստացի տոկոսադրույք (ՏՓՏ)

Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելի, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:

4. ՎԱՐԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ

4.1 Վարկի մարման ընդհանուր վճար
(վարկի մայր գումար+այլ վճարներ) — << դրամ

4.2 Այլ վճարներ
(7-րդ կետով սահմանված բոլոր այլ վճարների ընդհանուր գումարը) — << դրամ

վարկառուի ստորագրություն *երաշխավորի ստորագրություն*

5. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

☐ 5.1 Գրավ

☐ 5.2 Երաշխավորություն

6. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Արտոնյալ ժամկետ
(Գրեյս պերիոդ)

6.2 Հաշվի նվազագույն շարժ և վճարման կարգ

6.3 Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող %

վարկառուի ստորագրություն *երաշխավորի ստորագրություն*

2.1 Վարկատուի անվանումը

Գտնվելու վայր

Հեռ.

Էլ. փոստ

2.2 Վարկառուի անուն, ազգանուն

Բնակության վայր

Հեռ.

Էլ. փոստ

Վարկատուի հետ հաղորդակցման եղանակ

7. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

7.1 Վարկային հայտի ուսումնասիրության

7.2 Վարկի սպասարկման

7.3 Գրավի գնահատման

7.4 Նոտարական վավերացման

7.5 Գրավի ապահովագրության

7.6 Քարտի սպասարկման

7.7 Կանխիկացման
(վարկատուի բանկոմատներից կանխիկացման)

7.8 Այլ միջնորդավճարներ

ՍՈՒՅՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՁԵՋ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ 10 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ:
ՍՈՒՅՆ ԹԵՐԹԻԿԸ ՉԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ:
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԴՐՈՒՅԹԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ՁԵՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴԻՄԵԼ ՎԱՐԿԱՏՈՒԻՆ՝ ՊԱՐՉԱՔԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):

Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒԺԴ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում

7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում

7.3 Այլ վճարներ

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ *օր*

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ *օր*

Վարկը տրամադրելու ժամկետ *օր* *(պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո)*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»,
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

ԻՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մովսես Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

»

Հավելված 4

«Հավելված 4

Վարկային գծի (օվերդրաֆտի) էական պայմանների անհատական թերթիկի (այսուհետ՝ Անհատական թերթիկ) լրացման ուղեցույց

Սույն ուղեցույցը չի տրամադրվում վարկառուին:

1. ***Անհատական թերթիկը*** տրամադրվում է միայն 10,000,000 ՀՀ դրամը չգերազանցող վարկերի համար:

2. ***«1.1. Թերթիկի համար»*** տողում լրացվում է վարկատուի կողմից տրամադրվող Անհատական թերթիկի հերթական համարը:

3. ***«1.2. Վարկային հայտի դրական որոշման մասին վարկառուին տեղեկացման ամսաթիվ»*** տողում լրացվում է վարկատուի կողմից վարկառուին վարկային հայտի դրական որոշման մասին տեղեկացման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:

4. ***«2.1. Վարկատուի վերաբերյալ»*** վանդակում լրացվում են վարկատուի անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, փոստային հասցեն(երը) (օրինակ՝ ՀՀ, Երևան, Նորք-Մարաշ, Ազգ 11), հեռախոսահամար(ներ)ը (օրինակ՝ +(37410) 123456) և էլեկտրոնային հասցեն(երը), որոնցով վարկառուն կարող է սպառիչ տեղեկություններ ստանալ տրամադրվող վարկի վերաբերյալ: Ընդ որում, եթե առկա է կենտրոնացված թեժ գիծ, ապա նշվում է թեժ գծի հեռախոսահամարը, եթե ոչ՝ նշվում է այն հեռախոսահամարը, որի միջոցով վարկառուն կարող է առանց խոչընդոտների կապ հաստատել վարկատուի հետ:

5. ***«2.2. Վարկառուի վերաբերյալ»*** վանդակում լրացվում են վարկառուի անունը, ազգանունը, փոստային հասցեն(երը), հեռախոսահամար(ներ)ը և էլեկտրոնային հասցեն(երը), որոնցով վարկատուն կարող է կապ հաստատել վարկառուի հետ, ինչպես նաև վարկառուի՝ վարկատուի հետ հաղորդակցման նախընտրելի եղանակը: Օրինակ՝ էլ. փոստ:

6. ***«3.1. Վարկի անվանում»*** տողում լրացվում են վարկատուի կողմից տրամադրվող սպառողական վարկի անվանումը և տեսակը: Օրինակ՝ «Էքսպրես» վերականգնվող վարկային գիծ:

7. ***«3.2. Վարկի գումար»*** տողում լրացվում է վարկի գումարի արժեքը: Օրինակ՝ 1,800,000:

8. ***«3.3. Վարկի ժամկետ»*** տողում լրացվում է վարկի ժամկետը ամիսներով: Օրինակ՝ 24:

9. ***«3.4. Տարեկան անվանական % (ՏԱՏ)»*** տողում լրացվում է վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը: Օրինակ՝ 18:

10. ***«3.5. Տարեկան փաստացի % (ՏՓՏ)»*** տողում լրացվում է վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը: Օրինակ՝ 19,70:

11. ***«4.1. Վարկի մարման ընդհանուր վճար»*** տողում լրացվում է վարկի մայր գումարի, տոկոսագումարների և այլ վճարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 1,120,000:

12. ***«4.2. Այլ վճարներ»*** տողում լրացվում է 7.1-7.8-րդ կետերով սահմանված այլ վճարների ընդհանուր գումարը: Օրինակ՝ 65,000:

13. ***«5.1. Գրավ»*** տողում լրացվում են վարկի ապահովման միջոց հանդիսացող գրավի տեսակ(ներ)ը և նկարագրությունը: Օրինակ՝ 2014 թ. «ԱԲԳԴ» մակնիշի ավտոմեքենա: Վարկի գրավի պահանջի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

14. ***«5.2. Երաշխավորություն»*** տողում լրացվում են երաշխավոր(ներ)ի անունը և ազգանունը: Վարկի երաշխավորի բացակայության դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

15. ***«6.1. Արտոնյալ ժամկետ (Գրեյս պերիոդ)»*** տողում լրացվում են վարկի համար սահմանված արտոնյալ ժամկետը և կիրառման դեպքը: Օրինակ՝ վարկի կանխիկացմանը հաջորդող 15 օրվա ընթացքում վարկը օգտագործելու դեպքում տոկոսագումար չի գանձվում կամ վարկի կանխիկացումից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը վարկը օգտագործելու դեպքում տոկոսագումար չի գանձվում: Եթե սահմանված է արտոնյալ ժամկետի այլ ձև, ապա նշվում է այդ ձևը: Արտոնյալ ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի սահմանվում:

16. ***«6.2. Հաշվի նվազագույն շարժ և վճարման կարգ»*** տողում լրացվում է հաշվի նվազագույն շարժը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս և այդ գումարի վճարման կարգը (պարբերականությունը): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ կամ օգտագործված մասի նկատմամբ 5% վճարում մինչև հաջորդ ամսվա 10-ը: Հաշվի նվազագույն շարժ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

17. ***«6.3. Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող %»*** տողում լրացվում է վարկի չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքը: Օրինակ՝ 13: Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող % սահմանված չլինելու դեպքում լրացվում է՝ Չի սահմանվում:

18. ***«7.1. Վարկային հայտի ուսումնասիրության»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ), և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 25,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Վարկային հայտի ուսումնասիրության վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

19. ***«7.2. Վարկի սպասարկման»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի նկատմամբ), և պարբերականությունը (ամսական, տարեկան և այլն):

Օրինակ՝ 125,000 ՀՀ դրամ, տարեկան կամ 5% մնացորդի նկատմամբ, տարեկան: Վարկի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

20. ***«7.3. Գրավի գնահատման»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ), և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Գրավի բացակայության կամ գրավի գնահատման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

21. ***«7.4. Նոտարական վավերացման»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի նկատմամբ), և պարբերականությունը (միանվագ): Օրինակ՝ 15,000 ՀՀ դրամ, միանվագ կամ 5% մայր գումարի նկատմամբ, միանվագ: Նոտարական վավերացման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

22. ***«7.5. Գրավի ապահովագրության»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս (մայր գումարի, մնացորդի, գույքի արժեքի, մնացորդի և տոկոսագումարների նկատմամբ), և պարբերականությունը (միանվագ, տարեկան և այլն): Օրինակ՝ 250,000 ՀՀ դրամ, տարեկան: Գրավի բացակայության կամ գրավի ապահովագրման պահանջ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

23. ***«7.6. Քարտի սպասարկման»*** տողում լրացվում են տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար, և պարբերականությունը (ամսական, տարեկան և այլն): Օրինակ՝ 10,000 ՀՀ դրամ, տարեկան: Քարտի սպասարկման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

24. ***«7.7. Կանխիկացման (վարկատուի բանկոմատներից կանխիկացման)»*** տողում լրացվում է տվյալ վճարի գանձման չափը՝ որպես բացարձակ գումար կամ որպես տոկոս: Օրինակ՝ 500 ՀՀ դրամ կամ 3% կամ 1%, նվազագույնը 300 ՀՀ դրամ: Կանխիկացման վճար սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

25. ***«7.8. Այլ միջնորդավճարներ»*** տողում այլ միջնորդավճարների առկայության դեպքում լրացվում են տվյալ վճարի անվանումը, գանձման չափը և պարբերականությունը: Այլ միջնորդավճարներ սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

26. ***«9.1. Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի մայր գումարը չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ 3 և ավելի աշխատանքային օր ուշացման դեպքում՝ ժամկետանց վարկի մնացորդի 2%, օրական:

27. ***«9.2. Տոկոսագումարները չվճարելու դեպքում»*** տողում լրացվում են տվյալ վարկի տոկոսագումարները չվճարելու դեպքում կիրառվող տույժ/տուգանքի չափը և կիրառման դեպքերը: Օրինակ՝ ժամկետանց վարկի մնացորդի 0.1%, օրական:

28. ***«9.3. Այլ վճարներ չկատարելու դեպքում»*** տողում լրացվում է տվյալ վարկի գծով պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող այլ տույժ/տուգանքների չափը: Այլ տույժ/տուգանք սահմանված չլինելու դեպքում համապատասխան տողում լրացվում է՝ Չի պահանջվում:

29. ***«9.4. Մարումների հերթականություն»*** վանդակում լրացվում է վարկառուի կողմից պարտավորությունների մարման հերթականությունը (տույժ/տուգանքներ, տոկոսագումարներ, մայր գումար):

30. ***«Հաստատում եմ, որ սույն թերթիկում ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են»*** վանդակում պարտադիր դրվում են վարկատուի պատասխանատու անձի ստորագրությունը և վարկառուին թերթիկի տրամադրման ամսաթիվը: Թերթիկը փոստային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով վարկառուին ուղարկելու դեպքում լրացվում է թերթիկի ուղարկման ամսաթիվը: Թերթիկը վարկառուին առձեռն տրամադրելու դեպքում լրացվում է թերթիկի փաստացի տրամադրման ամսաթիվը:

31. ***«Հաստատում եմ, որ նախքան պայմանագրի կնքումը ստացել և հասկացել եմ սույն թերթիկում ներկայացված բոլոր տեղեկությունները»*** վանդակում պարտադիր դրվում են վարկառուի ստորագրությունը և ստորագրման ամսաթիվը: Երաշխավորի առկայության դեպքում դրվում է նաև երաշխավորի ստորագրությունը և ստորագրման ամսաթիվը:

«Բաց կամ միջակայքային ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/26-ը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել ներդրումային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմքերը, որոնք կարող են նախատեսվել ֆոնդի կառավարիչների կողմից ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ),

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բաց կամ միջակայքային ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/26-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 նոյեմբերի 2014 թ., N 311-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 311-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/26
«ԲԱՑ ԿԱՄ ՄԻՋԱԿԱՅՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՅԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը կարգավորում է բաց կամ միջակայքային ֆոնդի կառավարիչների կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման այն հիմքերը, որոնք ֆոնդի կառավարիչները կարող են նախատեսել ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ):

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՓԱՅԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Բաց կամ միջակայքային ֆոնդի կառավարիչը ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) կարող է նախատեսել ֆոնդի մասնակիցների շահերը վտանգող ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման միայն հետևյալ հիմքերը.

1) ***կարգավորվող շուկաների բնականոն գործունեության դադարում կամ շուկայի ծախողումներ (այդ թվում՝ գործարքների կնքման սահմանափակումների կիրառում):*** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման այս հիմքն առկա է այն ժամանակ, երբ շուկայի վրա ազդում են այնպիսի անկանխատեսելի իրադարձություններ, որոնք խափանում են կարգավորվող շուկայի գործունեության բնականոն ընթացքը և (կամ) առաջացնում են շուկայի ծախողումներ (անկայունություն),

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. նոյեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.12.2014 թ. (ՀՀԳՏ N32 (511), 15.12.2014):

որն էլ անհնար է դարձնում ֆոնդի ակտիվների արժեքի ճշգրիտ որոշումը կամ ֆոնդի ակտիվների վաճառքը՝ փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) վճարը փոխհատուցելու համար: Ընդ որում, եթե կարգավորվող շուկաների բնականոն գործունեության դադարեցումները, շուկայի ձախողումները չեն ազդում ներդրումային ֆոնդի ակտիվների էական մասի վրա, այս դեպքում փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցումը կարող է հիմնավորված չլինել:

2) ***Գործառնական խնդիրների կամ տեխնիկական ձախողումների առաջացում:*** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման համար հիմք հանդիսացող իրավիճակներ կարող են համարվել գործառնական խնդիրները կամ տեխնիկական ձախողումները, որոնք կարող են ժամանակավորապես խոչընդոտել ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացումը, ուստի՝ ազդել ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի վրա: Բացի այդ, երրորդ անձինք, որոնք գործում են ֆոնդի անունից և հաշվին, նույնպես կարող են առաջացնել կենսաթոշակային ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի վրա ազդող գործառնական խնդիրներ:
3) ***Իրացվելիության խնդիրների առաջացում:*** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմք կարող են հանդիսանալ այն դեպքերը, երբ ներդրումային ֆոնդում առկա դրամական միջոցները բավարար չեն փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) համար, և ներդրումային ֆոնդի ակտիվները կարող են վաճառվել զգալի կորուստներով:
4) ***Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) արդյունքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքը էապես կնվազի և (կամ) կնվազի օրենքով որոշված կարգով նախատեսված ֆոնդի զուտ ակտիվների նվազագույն մեծությունից:***
5) ***Այլ գործոններ:*** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմք կարող են հանդիսանալ նաև բնական աղետները, ինչպես նաև այն գործոնները, որոնք անհնար են դարձնում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի որոշումը, ֆոնդի ակտիվների գնահատումը, տնօրինումը և (կամ) դրանց գծով եկամուտների ստացումը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ նոր խմբագրությամբ ընդունումից հետո «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը, հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշումը համապատասխանեցնել օրենքում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց գրանցող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը, հայտարարություն ներկայացման կարգը և ժամկետները հաստատելու մասին» թիվ 20-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում.

ա) «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» բառերը փոխարինել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» բառերով,

բ) «23.1» թիվը փոխարինել «66» թվով,

2) որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի 1-ին ենթակետում «15-րդ» թիվը փոխարինել «14-րդ» թվով,

3) որոշմամբ հաստատված հավելվածի 2-ի 1-ին կետում.

ա) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը» թիվ 20-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ում սահմանված ձևով հայտարարությունը» բառերը փոխարինել «Հավելվածի 1-ով սահմանված «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց գրանցող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը»» բառերով,

բ) «21 և 22» թվերը փոխարինել «27, 29, 34 և 39» թվերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 դեկտեմբերի 2014 թ., Ն 335-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 2-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.12.2014 թ. (ՀՀԳՏ Ն33 (512), 26.12.2014):

*«Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու խնդրանքի քննարկման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգը» հաստատելու մասին**

Նպատակ ունենալով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նախատեսել լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից անձին հանելու խնդրանքի քննարկման կարգը և ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, 11-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը և 28-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու խնդրանքի քննարկման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգը»՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 դեկտեմբերի 2014 թ., N 336-Ն

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 336-Ն որոշման

ԿԱՐԳ
Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու խնդրանքի քննարկման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը գործում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա:

2. Սույն կարգով սահմանվում են լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից (այսուհետ՝ Ցանկեր) անձին հանելու խնդրանքի քննարկման կարգը և ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգը:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն Օրենքով սահմանված նշանակությունը:

Գլուխ 2. Լիազոր մարմնի հրապարակած ցանկերից ահաբեկչության հետ կապված անձանց հանելը

4. Ցանկում ներառված անձն իրավունք ունի դիմելու լիազոր մարմնին՝ իրեն ցանկից հանելու համար, եթե կարծում է, որ չի համապատասխանում կամ այլևս չի համապատասխանում ցանկում ներառվելու չափանիշներին: Այդ նպատակով լիազոր մարմնին ներկայացվում է «Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 2-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.12.2014 թ. (ՀՀՊՏ N33 (512), 26.12.2014):

սառեցումը վերացնելու դիմում (այսուհետ՝ Դիմում)՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ով սահմանված օրինակելի ձևի, որին կարող են կցվել ցանկում ներառված անձի կարծիքը հիմնավորող փաստաթղթեր:

5. Լիազոր մարմնին ներկայացված ցանկերից հանելու մասին Դիմումը վերադարձվում է ոչ ամբողջական կամ թերի լրացված լինելու դեպքում: Սույն կետի իմաստով Դիմումը համարվում է ոչ ամբողջական կամ թերի, եթե Դիմումը չի պարունակում սույն որոշման Հավելված 1-ով սահմանված՝ դիմումատուին վերաբերող բոլոր տեղեկությունները: Սույն կետում նշված հիմքով Դիմումի վերադարձման դեպքում անձը կարող է լիազոր մարմնին կրկին ներկայացնել Դիմումը՝ վերացնելով լիազոր մարմնի կողմից նշված թերությունները:

6. Լիազոր մարմինն իրավունք ունի պահանջել ներկայացնելու Դիմումը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7. Դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում լիազոր մարմինը անձին ցանկերից հանելու մասին քննարկման արդյունքների վերաբերյալ ծանուցում է ուղարկում Դիմում ներկայացրած անձին:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված մեկամսյա ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, եթե, լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերման անհրաժեշտությունից ելնելով, լիազոր մարմինը հարցում(ներ) է կատարում օտարերկրյա իրավասու մարմիններին: Ժամկետի երկարաձգման մասին լիազոր մարմինը ծանուցում է Դիմումը ներկայացրած անձին:

9. Դիմումը բավարարելու դեպքում, այն բավարարելու օրվանից երկօրյա ժամկետում, լիազոր մարմինը Դիմումը ներկայացրած անձին հանում է ցանկերից և այդ մասին տեղեկություն է հրապարակում լիազորված մարմնի պաշտոնական կայքում:

10. Անձը, ում ցանկերից հանելու մասին դիմումը մերժվել է, կարող է կրկին դիմել լիազոր մարմնին իր անունը ցանկերից հանելու հարցով, եթե երևան են եկել լրացուցիչ հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ անձը չի համապատասխանում կամ այլևս չի համապատասխանում ցանկերում ներառելու չափանիշներին:

Գլուխ 3. Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելը

11. Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը լիազոր մարմնի կողմից վերացվում է.

1) ահաբեկչության հետ կապված անձին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերից հանելու դեպքում.
2) գույքը սխալմամբ սառեցված լինելու դեպքում՝ վերլուծության արդյունքում, որը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
   ա. լիազոր մարմնի նախաձեռնությամբ,
   բ. անձի դիմումի հիման վրա.
3) քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից գույքի վրա կալանք դնելու դեպքում:

12. Ահաբեկչության հետ կապված անձին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերից հանելու դեպքում լիազոր մարմինը, այդ մասին տեղեկանալու օրվանից երկօրյա ժամկետում, վերացնում է գույքի սառեցումը, որի մասին եռօրյա ժամկետում ծանուցում է սառեցումն իրականացրած անձին կամ մարմնին:

13. Գույքը սխալմամբ սառեցված լինելու դեպքում գույքի սեփականատիրոջ կողմից այդ մասին սույն կարգի Հավելված 1-ով նախատեսված դիմումը ստանալու օրվանից հնարավորինս սեղմ, բայց ոչ ավելի, քան սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետներում լիազոր մարմինը ստուգում է անձի ինքնությունը, ում գույքը սառեցվել է, և վերջինիս դիմումի հիմնավորվածության դեպքում վերացնում է գույքի սառեցումը: Լիազոր մարմինն իրականացված վերլուծության արդյունքների մասին դրանց ամփոփման օրվանից եռօրյա ժամկետում ծանուցում է անձին, ում գույքը սառեցվել էր, ինչպես նաև սառեցումն իրականացրած անձին կամ մարմնին:

14. Լիազոր մարմինը սառեցված գույքի վրա օրենքով սահմանված կարգով կալանք դնելու մասին քրեական հետապնդում իրականացնող մարմնից տեղեկացում ստանալու օրվանից երկօրյա ժամկետում վերացնում է գույքի սառեցումը, որի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցում է սառեցումն իրականացրած անձին կամ մարմնին՝ սառեցումը վերացնելու օրվանից եռօրյա ժամկետում:

Հավելված 1

«Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու խնդրանքի քննարկման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգի»

Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու դիմումի օրինակելի ձև

Դիմում

1. Դիմումի առարկան

Խնդրում ենք նշել պահանջի առարկան
☐ Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու մասին ☐ Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու մասին

2. Դիմում ներկայացրած անձի մասին տեղեկություններ

1) Ֆիզիկական անձանց համար

Անունը, ազգանունը (այնպես, ինչպես ներառված է ցանկում)		
Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը		
Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը		
Ծննդյան վայրը (քաղաք/շրջան/երկիր)		
Քաղաքացիությունը	Ներկա	
	Նախկին (ներառյալ ամսաթվերը)	
Հաշվառման հասցեն	Հիմնական հասցեն (քաղաք/շրջան/երկիր)	
	Այլ հասցեներ (նախկին/ներկայիս)	
Խնդրում ենք նշեք, արդյոք ցանկում ներառված անձը ողջ է		Այո ☐ Ոչ ☐ Եթե ոչ, խնդրում ենք ներկայացնել մահվան վկայականը կամ այլ համարժեք փաստաթուղթ, որը առնվազն կարտացոլի մահվան փաստը, անձի ամբողջական անունը, ծննդյան ամսաթիվն ու վայրը, ինչպես նաև մահվան ամսաթիվն ու վայրը

2) Իրավաբանական անձանց համար

Անվանումը (այնպես, ինչպես ներառված է ցանկում)		
Կարճ անվանումը կամ հապավումը		
Անհատականացման համարը		
Գտնվելու վայրը	Ներկա	
	Նախկին, եթե առկա է	
Խնդրում ենք նշել, արդյոք ցանկում ներառված իրավաբանական անձը դադարեցրել է գործունեությունը		Այո ☐ Ոչ ☐ Եթե այո, խնդրում ենք ներկայացնել համապատասխան փաստաթղթեր
Այլ տեղեկություններ		

3. Սառեցված գույքի նկարագիրը

Խնդրում ենք մանրամասն ներկայացնել սառեցված գույքի նկարագիրը (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել փաստաթղթեր)

4. Ցանկից հանելու/սառեցումը վերացնելու մասին նախկին դիմումներ

Արդյո՞ք առկա են նույն անձին ցանկից հանելու, սառեցումը վերացնելու վերաբերյալ այլ դիմումներ
Այո ☐ Ոչ ☐ Եթե այո, խնդրում ենք մանրամասնել

5. Ցանկից հանելու/սառեցումը վերացնելու վերաբերյալ հիմնավորում

Խնդրում ենք հիմնավորել, թե ինչու եք կարծում, որ չեք համապատասխանում կամ այլևս չեք համապատասխանում ահաբեկչության հետ կապված անձանց ցանկում ներառվելու չափանիշներին (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել փաստաթղթեր)

6. Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

Խնդրում ենք նշել փաստաթղթի անվանումը և էջերի քանակը

7. Ցանկից հանելու/սառեցումը վերացնելու մասին դիմումի ներկայացում

Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկում _____ համարի ներքո ներառված _____-ին նշված ցանկից հանելու մասին դիմումը ներկայացվել է __/__/____ թ.:

Գույքի սառեցումը վերացնելու մասին դիմումը ներկայացվել է __/__/____ թ.:

_____
(ստորագրություն)

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ապահովագրական ընկերությունների կողմից Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին[*]

Նպատակ ունենալով ձևավորված խնայողությունների միջոցով ապահովել ԱՊՊԱ ոլորտի ենթակառուցվածքների զարգացումը՝ միևնույն ժամանակ չվտանգելով Երաշխավորման ֆոնդի առջև դրված խնդիրների պատշաճ իրականացումը և Երաշխավորման ֆոնդի ֆինանսական կայունությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի թիվ 34L որոշմամբ ներկայացված առաջարկությունը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Դադարեցնել ապահովագրական ընկերությունների կողմից Երաշխավորման ֆոնդին կատարվող 2014 թվականի չորրորդ և 2015 թվականի առաջին երեք եռամսյակների վճարների իրականացումը՝ դադարեցումից հետո առաջին վճարումը կատարելով 2015 թվականի 4-րդ եռամսյակին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 դեկտեմբերի 2014 թ., N 337-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 2-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.12.2014 թ. (ՀՀԳՏ N33 (512), 26.12.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հունիսի 24-ի թիվ 146-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին *

Նպատակ ունենալով բարձրացնել Կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ գործիքների կիրառման արդյունավետությունը, բարելավել իրացվելիության կառավարման արդյունավետությունը, համապատասխանեցնել կապիտալի պահանջները բանկերի կողմից ստանձնած ռիսկերի մակարդակին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 51-րդ կետի առաջին և երկրորդ նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«51. Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա գումարի մեծության կարգավորումը կատարվում է փաստացի պահուստավորված և պահուստավորման ենթակա (հաշվարկային) միջոցների միջին օրական գումարների համեմատման միջոցով, այնպես, որ փաստացի պահուստավորված միջին օրական գումարը հավասար կամ ավելի լինի հաշվետու ժամանակահատվածում պահուստավորման ենթակա (հաշվարկային) միջոցների միջին օրական գումարից:»:

2) Կանոնակարգ 2-ի 52-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«52. Ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա միջոցների չափի հաշվարկի համար 2015 թվականի փետրվարի 1-ից սկսվող հաշվետու ժամանակահատվածի և դրան հաջորդող հաշվետու ժամանակահատվածների տևողությունը սահմանվում է օրացուցային մեկ ամիսը, իսկ միջոցների փաստացի պահուստավորման հաշվարկի ժամանակահատվածը ընդգրկում է հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող 2-րդ ամսվանից սկսած՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահուստավորման օրացույցով (այսուհետ՝ պահուստավորման օրացույց) նախատեսված, որպես կանոն, չորեքշաբթիից երեքշաբթի ընկած 28 կամ 35 օրերը: Ընդ որում, փաստացի պահուստավորման վերջնաժամկետ է համարվում պահուստավորման օրացույցով սահմանված փաստացի պահուստավորման վերջին օրվա՝ Կենտրոնական բանկի գործառնական օրվա ավարտը:»:

3) Կանոնակարգ 2-ի 53-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53. Պարտադիր պահուստավորման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված միջոցները, բացառությամբ՝

1) Կենտրոնական բանկից ներգրավված միջոցների,
2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի թիվ 717Ա որոշմամբ հաստատված՝ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի Բաղադրիչ 1-ի միջոցների,
3) «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունից ներգրավված միջոցների,
4) «ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունից ներգրավված միջոցների,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.12.2014 թ. (ՀՀԳՏ N33 (512), 26.12.2014):

5) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միջև թղթակցային հաշիվների, միմյանցից ներգրաված այլ միջոցների,
6) Կենտրոնական բանկում բացված կուտակման հաշվում հաշվառվող կանոնադրական կապիտալի համալրման նպատակով ներգրաված միջոցների,
7) բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառվող երկարաժամկետ ստորադաս փոխառությունների,
8) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով թողարկված պարտատոմսերի (պարտքային արժեթղթերի), որոնք բավարարում են հետևյալ պայմանները.

ա. Թողարկվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում՝ բանկի կողմից կամ թողարկման նպատակով ստեղծված կազմակերպության կողմից՝ այդ կազմակերպության կողմից բանկին տրամադրված փոխառության ապահովությամբ, ընդ որում՝ պարտատոմսերի մարման ժամկետը թողարկման պահին փոքր չէ երկու տարուց, և պարտատոմսերի գծով մայր գումարի մասնակի մարումներ չեն նախատեսվում տեղաբաշխման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում, կամ

բ. Թողարկվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում՝ երկու տարի և ավելի մարման ժամկետով և բավարարում են սույն կանոնակարգի Հավելված 11-ով սահմանված բոլոր պայմանները:

Սույն կետի իմաստով՝ սվոպով ներգրավված միջոցները չեն համարվում ներգրավված միջոց:»:

4) Կանոնակարգ 2-ի 53.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53.1. Եթե սույն կանոնակարգի 53-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված պահանջները բավարարող պարտատոմսերի գծով իրականացվում է վաղաժամկետ մարում, ապա բանկն այդ պարտատոմսերի գծով իրականացնում է պահուստավորում հետևյալ կարգով.

1) Պահուստավորումն իրականացվում է սկսած ներգրավված միջոցի վաղաժամկետ մարման օրվան հաջորդող օրվանից այն ժամկետի ընթացքում, որի չափով ներգրավված միջոցը չէր ընդգրկվել պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում,
2) Պարտադիր պահուստավորման չափը որոշվում է որպես ներգրավված միջոցի միջին կշռված գումար՝ կիրառելով սույն կանոնակարգի 24-րդ և 24.1-րդ կետերով համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների համար սահմանված այն դրույքաչափերի 1.5-ապատիկը, որը կիրառվում էր ներգրավված միջոցի՝ պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված դրույքաչափով ընդգրկվելու ժամանակահատվածում: Ընդ որում՝ վաղաժամկետ մարված միջոցի միջին կշռված մեծության հաշվարկում չի ներառվում ներգրավված միջոցի վաղաժամկետ մարման օրը:
3) Պահուստավորումն իրականցվում է սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված գումարը պահուստավորման ենթակա (հաշվարկային) միջոցներին գումարելու միջոցով սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի ընթացքում:»:

5) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 6-րդ կետի Աղյուսակ 1-ի 6.11.1-րդ կետում՝

ա. «10» թիվը փոխարինել «0» թվով,

բ. «-» նշանը փոխարինել «10» թվով:

6) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 17-րդ կետում «ոչ բարձր» բառերը փոխարինել «բարձր» բառով:

7) Կանոնակարգ 2-ը լրացնել Հավելված 11-ով՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 146-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Կանոնակարգ 2-ի 28-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ընդ որում, հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 50 տոկոսի չափով, 2016 թվականի

հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 40 տոկոսի չափով, 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 30 տոկոսի չափով, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 20 տոկոսի չափով:»:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թ. հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 146-Ն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետը և նույն որոշման 5-րդ կետը:

4. 2014 թվականի նոյեմբերի 12-ից մինչև 2015 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում ներգրաված միջոցների դիմաց պահուստավորում իրականացնելու համար 2014 թվականի նոյեմբերի 12-ից սկսվող հաշվետու ժամանակահատվածը, դրան հաջորդող հաշվետու ժամանակահատվածները և փաստացի պահուստավորման ժամանակահատվածները սահմանվում են հետևյալ աղյուսակում՝

Հաշվետու		Փաստացի	
Սկիզբ	Վերջ	Սկիզբ	Վերջ
12/11/2014	09/12/2014	10/12/2014	13/01/2015
10/12/2014	24/12/2014	14/01/2015	10/02/2015
25/12/2014	14/01/2015	11/02/2015	10/03/2015
15/01/2015	31/01/2015	11/03/2015	07/04/2015

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Ընդ որում, սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով խմբագրված 53-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետի 4-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված դրույթները տարածվում են 2014 թվականի դեկտեմբերի 1-ից հետո ներգրաված միջոցների վրա և վերաբերում են պարտադիր պահուստավորման 2014 թվականի դեկտեմբերի 10-ից սկսվող և հաջորդող հաշվետու ժամանակահատվածներին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 դեկտեմբերի 2014 թ., N 339-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 339-Ն որոշմամբ

«Հավելված 11
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի
թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության
կարգավորումը, բանկային գործունեության հիմնական
տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՄԵՋ ՉԸՆԴԳՐԿՎՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Պարտատոմսը զեղչատոկոսային է կամ արժեկտրոնային՝ ֆիքսված կամ լողացող տոկոսադրույքով, չի պարունակում մասնակի մարումներ կամ ժամկետից շուտ մարելու որևէ օպցիոն:

2. Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը, ինչպես նաև արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) տարբեր չեն:

3. Արժեկտրոնային տոկոսադրույքը հանդիսանում է անվանական տոկոսադրույք և բացասական մեծություն չէ:

4. Արժեկտրոնների վճարման ժամանակահատվածները կանոնավոր են: Արժեկտրոնի վճարումն իրականացվում է տարեկան, կիսամյակային, եռամսյակային կամ ամսական պարբերականությամբ:

5. Օրերի հաշվարկման պայմանականությունն ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկով՝ Փաստացի/365, փաստացի/փաստացի, փաստացի/360 կամ 30/360:

6. Լողացող տոկոսադրույքով պարտատոմսի դեպքում հղման դրույքը բավարարում է հետևյալ պայմաններին՝ թափանցիկ, հրապարակված, անընդհատ, վստահելի և մատչելի շուկայի մասնակիցների համար:

7. Լողացող տոկոսադրույքով պարտատոմսի օրերի հաշվարկման պայմանականությունը և արժեկտրոնի հղման դրույքի օրերի հաշվարկման պայմանականությունը նույնն է:

8. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի արժեկտրոնի սահմանման նպատակով հղման դրույքին գումարվող մեծությունը՝ հղման դրույքի մարժան (Reset Margin) հանդիսանում է հաստատուն անվանական մեծություն:»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերից ստացվող հաշվետվությունը համապատասխանեցնել նորմատիվային դաշտի փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 2-րդ կետի աղյուսակում «28-օրյա կամ 35-օրյա» բառերը փոխարինել «ամսական» բառով:

2) Կանոնակարգ 3-ի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Թիվ 4 հաշվետվության մեջ բոլոր արժույթներով ներգրավված միջոցները (անվանական գումարների (մայր գումարների) մնացորդները) ներկայացվում են համատեղ՝ մեկ էջի վրա, դրամական արտահայտությամբ, հազար դրամներով՝ առանց տասնորդական միավորների: Ներգրավված միջոցների խմբավորումը կատարվում է ըստ հետևյալ խմբերի՝ «ՀՀ դրամ», «ԱՄՆ դոլար», «Եվրո» և «Այլ արտարժույթ»: Թիվ 4 հաշվետվության 2-ից 13-րդ սյունակների տողերում ներկայացվում է պարտադիր պահուստավորման ենթակա ներգրավված միջոցների հաշվարկը: 18-ից 21-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 53.1-րդ կետով սահմանված կարգով վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները՝ ըստ արժույթների: 22-րդ, 23-րդ և 24-րդ սյունակների տողերում ներկայացվում է փաստացի պահուստավորված միջոցների հաշվարկը: Ընդ որում, 22-րդ, 23-րդ և 24-րդ սյունակների տողերը լրացնելիս հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված հաշվետու բանկի թղթակցային հաշիվների տվյալ օրվա մնացորդն արտացոլող քաղվածքները: 25-ից 28-րդ և 29-ից 32-րդ սյունակների տողերում ներկայացվում են հաշվետու բանկի կողմից ներգրավված այն միջոցները, որոնք, համաձայն Կանոնակարգ 2-ի 53-րդ կետի համապատասխանաբար 7-րդ և 8-րդ ենթակետերի, ենթակա չեն պարտադիր պահուստավորման:»:

3) Կանոնակարգ 3-ի 34-րդ կետը՝

ա. «բացառությամբ՝» բառից հետո լրացնել «ձև թիվ 4 հաշվետվության,» բառերով,

բ. 4-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ձև թիվ 4 հաշվետվության ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային օրը (ներառյալ):»:

4) Կանոնակարգ 3-ի 37-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

5) Կանոնակարգ 3-ի Ձև թիվ 4 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ին: Ընդ որում, 2015 թվականի հունվարի 4-րդ աշխատանքային օրը ներկայացման ենթակա Ձև թիվ 4 հաշվետվությունն անհրաժեշտ է լրացնել միայն 2014 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի օրերի համար:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 դեկտեմբերի 2014 թ., N 340-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 20.12.2014 թ. (ՀՀՊՏ N33 (512), 26.12.2014):

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 340-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ

Ձև թիվ 4

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից* _____ *մինչև թ.*

Ամսաթիվ	Ռեզիդենտներից ներգրաված միջոցներ				Ոչ ռեզիդենտներից ներգրաված միջոցներ							
					Ընդամենը				Այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերից			
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Միջինը												
Ենթակա է պահուս-տավորման	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x

Ընդամենը ներգրաված միջոցներ				Վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները				Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում թղթակցային հաշվի մնացորդը			Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման, բացառությամբ ԿԲ-ից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների				Պարտատոմսերով ներգրաված միջոցներ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման			
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
				x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x

Կ.Տ. *Բանկի վարչության նախագահ* _____
(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին *

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 2-ի 24.1-րդ կետում «24» թիվը փոխարինել «20» թվով:

2) Կանոնակարգ 2-ի 51-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա գումարի մեծության կարգավորումը կատարվում է փաստացի պահուստավորված և պահուստավորման ենթակա միջոցների միջին օրական գումարների համեմատման միջոցով, այնպես, որ փաստացի պահուստավորված միջին օրական գումարը հավասար կամ ավելի լինի հաշվետու ժամանակահատվածում պահուստավորման ենթակա միջոցների միջին օրական գումարից:

Արտարժույթով (այդ թվում՝ մետաղական հաշիվներով) ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա գումարի մեծության կարգավորումը կատարվում է օրական կտրվածքով, այնպես, որ փաստացի պահուստավորման ժամանակահատվածում յուրաքանչյուր օր փաստացի պահուստավորված գումարը հավասար կամ ավելի լինի հաշվետու ժամանակահատվածում պահուստավորման ենթակա միջոցների միջին օրական գումարից:

Արտարժույթով (այդ թվում՝ մետաղական հաշիվներով) ներգրավված միջոցների դիմաց՝ հաշվետու ժամանակահատվածում պահուստավորման ենթակա միջոցների գումարը յուրաքանչյուր օրվա համար որոշվում է՝ հիմք ընդունելով արտարժույթով ներգրավված միջոցների օրական դրամային համարժեքը: Օրական դրամային համարժեքը յուրաքանչյուր օրվա համար որոշվում է հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների օրական դրամային համարժեքը որոշվում է՝ հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված ոսկու հաշվարկային գները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի դեկտեմբերի 24-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 դեկտեմբերի 2014 թ., N 369-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.12.2014 թ. (ՀՀՊՏ N2 (514), 15.01.2014):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2014)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 51

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 54

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 58

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 59

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 69

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 91
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 102
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 104
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 110
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվաճում	*2014թ. նոյեմբեր*	*2014թ. նոյեմբերի իրական աճի հիմքեքսը 2013թ. նոյեմբերի նկատմամբ (%)*	*2014թ. դեկտեմբեր*	*2014թ. դեկտեմբերի իրական աճի հիմքեքսը 2013թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		102.1		102.3
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	120359.2	106.1	127696.2	104.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	81232.6[1]	110.7[1]	65505.1	107.2
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	57262.9	89.9	88732.1	100.2
Առևտրի շրջաանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	217019.4	98.8	326353.0	86.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	92411.0	105.9	122768.4	113.8
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	715.3	116.5	780.1	99.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	175246[1]	106.8[1,2]	213727[3]	104.7[2]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2014 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.8	101.1	99.4	101.4
Փետրվար	98.8	100.1	100.9	100.0
Մարտ	99.6	99.6	97.8	98.9
Ապրիլ	100.5	103.0	100.6	100.0
Մայիս	99.2	102.3	101.4	97.5
Հունիս	98.2	99.6	100.6	89.8
Հուլիս	99.1	99.9	100.7	89.6
Օգոստոս	100.7	101.4	100.5	91.0
Սեպտեմբեր	100.4	98.7	100.1	97.7
Հոկտեմբեր	101.0	98.6	99.5	102.5
Նոյեմբեր	101.3	100.1	100.9	103.6
Դեկտեմբեր	103.0	103.9	101.0	101.5
2014 թ. հունվար – դեկտեմբերը 2013 թ. հունվար – դեկտեմբերի համեմատությամբ	103.0	108.5	102.1	100.8

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2012*	*2013*	*2014*	*2014*	*2014*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	3.6	2.9	2.8	2.8	5.5
Փետրվար	-0.9	-0.4	-1.2	1.6	4.6
Մարտ	0.1	0.4	-0.4	1.2	3.8
Ապրիլ	-0.6	-0.1	0.5	1.7	4.4
Մայիս	-1.3	0.0	-0.8	0.9	3.6
Հունիս	-1.3	-0.1	-1.8	-0.9	1.8
Հուլիս	-1.5	0.4	-0.9	-1.9	0.4
Օգոստոս	-0.4	0.3	0.7	-1.2	0.8
Սեպտեմբեր	0.8	-0.2	0.4	-0.8	1.5
Հոկտեմբեր	1.2	0.3	1.0	0.2	2.2
Նոյեմբեր	1.4	0.9	1.3	1.5	2.6
Դեկտեմբեր	2.1	1.1	3.0	4.6	4.6
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	3.2	5.6	4.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	2.6	5.8	3.0		

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2014 թ. դեկտեմբերը 2014 թ. նոյեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)* [3]
ՍԳԻ	**103.03**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**105.11**	**2.74**
Բանջարեղեն և կարտոֆիլ	118.23	1.14
Հացամթերք	104.34	0.46
Միրգ	108.26	0.30
Կաթնամթերք	105.78	0.25
Մսամթերք	102.34	0.24
Սուրճ, թեյ, կակաո	106.11	0.22
Կենդանական և բուսական յուղ	103.56	0.11
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.21**	**0.03**
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	103.29	0.08
Կոշկեղեն	97.53	-0.04
Հագուստ և գործվածք	98.23	-0.05
Մշակույթի ապրանքներ	106.27	0.02
Ծառայություններ, որից՝	**100.71**	**0.22**
Տրանսպորտի	104.19	0.14
Հանգստի կազմակերպման	106.43	0.04
Հանրային սննդի	101.28	0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2012	2013	2014
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.65	0.79	0.17
Փետրվար	0.08	0.21	-0.45
Մարտ	0.04	0.53	0.02
Ապրիլ	0.02	0.51	0.14
Մայիս	-0.16	0.38	0.05
Հունիս	0.35	0.54	-0.19
Հուլիս	0.14	0.09	0.30
Օգոստոս	-0.06	0.11	0.81
Սեպտեմբեր	0.67	0.28	1.01
Հոկտեմբեր	0.73	0.29	0.47
Նոյեմբեր	0.37	0.06	0.37
Դեկտեմբեր	0.58	-0.19	1.11
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	5.27	3.63	3.03
Փետրվար	4.91	3.73	2.35
Մարտ	4.27	4.20	1.82
Ապրիլ	3.81	4.71	1.44
Մայիս	3.30	5.30	1.09
Հունիս	3.26	5.50	0.43
Հուլիս	3.19	5.49	0.63
Օգոստոս	2.85	5.70	0.32
Սեպտեմբեր	3.10	5.34	0.47
Հոկտեմբեր	3.48	4.85	1.15
Նոյեմբեր	3.47	4.51	1.46
Դեկտեմբեր	3.50	3.69	2.75

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻ ՆԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**2.75**
Խոզի միս	0.30
Պանիր տնական (կովի կաթից)	0.25
Մածուն	0.17
Ծխախոտ «Գառնի»	0.16
Թթվասեր	0.15
Ծխախոտ «ՄՏ» փափուկ	0.12
Նրբերշիկ	0.12
Ծառայություններ կարճաժամկետ ապրելու համար կահավորված սենյակների վարձակալության հանձնման	0.11
Ծխախոտ «Ախթամար»	0.09
Ծառայություններ զբոսաշրջության՝ արտասահմանյան ուղերթ	0.08
Ալյուր բարձր տեսակի	0.07
Եփած երշիկ	0.07
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	-0.11
Բուսական յուղ արևածաղկի	-0.13
Տավարի միս	-0.20

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

[3] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	*2014 թ. հունվար – նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2014 թ. հունվար-նոյեմբերը 2013 թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ (%)*	*2014 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2014 թ. հունվար-դեկտեմբերը 2013 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1384.0	102.7	1519.3	102.7
Ներմուծում *(ՍԻՖ)*	4010.5	102.1	4401.6	100.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2626.5	101.8	2882.3	99.1

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

երկիր	**2013 թվական**					
	Դեկտեմբեր			**Հունվար - դեկտեմբեր**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	171900	22604	149297	1727945	235156	1492790
ԱՄՆ	11721	14149	-2427	152745	134063	18682
Ուկրաինա	1729	1915	-185	18281	21764	-3483
Ղազախստան	2659	151	2508	26756	2510	24246
Գերմանիա	2367	2662	-295	25629	47615	-21987
Իսպանիա	749	1132	-383	8860	16492	-7632
Ֆրանսիա	1905	1385	521	20652	23448	-2797
ԱՄԷ	1780	4694	-2914	32011	48291	-16280
Չինաստան	292	9223	-8931	5598	85969	-80370
Թուրքիա	179	2867	-2688	3398	29292	-25894
Այլ երկրներ	25051	18036	7015	280456	207551	72905
Ընդամենը	**220333**	**78817**	**141517**	**2302331**	**852151**	**1450180**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	**2014 թվական**					
	Դեկտեմբեր			**Հունվար – դեկտեմբեր**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	108025	29110	78916	1554852	252788	1302063
ԱՄՆ	20052	14508	5544	155685	150549	5136
Ուկրաինա	1242	885	356	15985	12951	3034
Ղազախստան	2289	250	2039	32752	7984	24768
Գերմանիա	3228	6760	-3532	34473	42475	-8002
Իսպանիա	936	1361	-425	8477	20422	-11945
Ֆրանսիա	2203	3552	-1349	21535	21302	233
ԱՄԷ	5219	3695	1524	27179	43511	-16333
Չինաստան	353	6550	-6197	3672	82556	-78884
Թուրքիա	280	1929	-1649	3260	22743	-19482
Այլ երկրներ	18837	29288	-10451	265686	245538	20148
Ընդամենը	**162666**	**97890**	**64776**	**2123556**	**902819**	**1220737**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

երկիր	2013 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	160667	18791	141876	1606643	180351	1426292
ԱՄՆ	9339	3293	6046	82339	32933	49407
Ուկրաինա	1641	1425	217	17019	14812	2207
Ղազախստան	2369	149	2220	23758	2151	21607
Գերմանիա	1642	801	841	15587	8214	7373
Իսպանիա	720	470	251	6439	4602	1837
Ֆրանսիա	1579	589	991	14698	6116	8582
ԱՄԷ	458	965	-507	7723	7874	-150
Չինաստան	137	987	-850	1390	11829	-10439
Թուրքիա	146	489	-343	1838	4357	-2519
Այլ երկրներ	9081	6488	2593	92356	50975	41381
Ընդամենը	**187780**	**34446**	**153335**	**1869791**	**324213**	**1545577**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2014 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	97676	23527	74149	1434242	203205	1231037
ԱՄՆ	12573	1467	11107	103610	31016	72595
Ուկրաինա	1237	670	568	14873	9226	5647
Ղազախստան	2054	207	1847	26582	3093	23489
Գերմանիա	1792	524	1267	19224	8632	10593
Իսպանիա	785	234	551	7063	4143	2920
Ֆրանսիա	1634	544	1090	15510	5963	9547
ԱՄԷ	482	491	-9	6794	6764	29
Չինաստան	90	662	-571	1287	12442	-11156
Թուրքիա	177	280	-103	2013	3781	-1767
Այլ երկրներ	8786	3625	5161	97359	51303	46055
Ընդամենը	**127287**	**32231**	**95056**	**1728558**	**339568**	**1388990**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2013	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	122.7	121.3	120.9	120.2	120.2	120.9	127.3	128.4	127.0	125.9	128.4	128.9
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	207.1	206.9	206.5	206.1	206.7	208.8	218.9	220.4	219.5	217.8	220.4	219.9
2014	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	133.3	131.8	131.1	131.9	130.0	128.3	128.8	131.6	134.7	138.0	142.8	139.4
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	221.3	222.4	223.8	225.7	225.4	227.3	230.4	234.3	240.5	245.5	249.8	238.6

[1] 2013 թ. հունվարին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում՝ 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը՝ 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում՝ 2003-2007 թթ.), 1997=100:


[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2013	2014											
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ	Ն	Դ [4]
Համախառն միջազգային պահուստներ	**2251.6**	**2113.5**	**2013.5**	**1970.3**	**1879.2**	**1866.8**	**1784.0**	**1912.6**	**1751.2**	**1663.3**	**1671.0**	**1537.6**	**1489.3**
Ոսկի	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	1.9	9.6	32.2	0.6	16.1	4.0	0.5	8.2	0.1	0.3	9.9	0.2	6.2
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2249.7	2104.0	1981.4	1969.7	1863.1	1862.8	1783.5	1904.5	1751.1	1663.0	1661.0	1537.5	1483.1

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*
[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*
[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[4] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2013	2014											
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ	Ն	Դ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**644.8**	**641.4**	**647.6**	**630.0**	**632.6**	**620.7**	**615.1**	**609.9**	**596.5**	**582.9**	**581.7**	**577.4**	**568.2**
ԱՄՀ վարկ	365.1	364.0	359.2	341.4	342.6	329.0	322.9	320.1	309.8	298.3	297.7	285.7	290.5
ՀՓԻ տեղաբաշխում	135.5	135.0	136.2	136.0	136.4	135.6	136.0	134.8	133.6	130.5	130.1	129.0	127.5
Այլ վարկեր	143.9	142.1	151.9	152.1	152.5	155.3	155.2	154.2	152.7	153.4	153.4	152.4	150.0
Այլ պարտավորություններ	0.3	0.3	0.3	0.4	1.1	0.8	0.9	0.8	0.4	0.7	0.6	10.4	0.3


[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Կենտրոնատոմոտեղ	Ընդամենը	Կենտրոնատոմոտեղ իսկական արժեթղթերով	Կենտրոնատոմոտեղ արժեթղթերով	ՕՀԿԳ-երի միջոցներ հաշվին	ՕՀԿԳ-երի միջոցներ իսկական ժամկետով	Ընդամենը	
2013								
Դեկտեմբեր	15259	15259	185847	4702	0	575	191124	**-175865**
2014								
Հունվար	15354	15354	221012	4654	0	579	226244	**-210890**
Փետրվար	14861	14861	209417	4782	0	586	214785	**-199924**
Մարտ	14815	14815	168538	2052	0	586	171176	**-156361**
Ապրիլ	14816	14816	153837	2057	0	586	156481	**-141664**
Մայիս	15098	15098	154394	2030	0	586	157009	**-141911**
Հունիս	15126	15126	166885	2004	0	578	169466	**-154340**
Հուլիս	15148	15148	138535	1973	0	576	141084	**-125935**
Օգոստոս	14780	14780	142304	1977	0	583	144864	**-130084**
Սեպտեմբեր	15041	15041	146131	1905	0	578	148613	**-133572**
Հոկտեմբեր	15238	15238	130789	1919	0	583	133291	**-118053**
Նոյեմբեր	15132	15132	129846	2008	0	615	132468	**-117336**
Դեկտեմբեր	14634	14634	113933	2166	0	674	116772	**-102138**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա m1 [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլրդ ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	Արտարժութային ավանդներ *(մլրդ ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	Փողի բազայի լծակ [5]	Դրամային բազմապատկիչ [6]
2013										
Դեկտեմբեր	888057	384467	198901	583369	264677	848046	697327	1545372	1.74	1.31
2014										
Հունվար	783046	338416	184649	523065	270195	793260	700625	1493885	1.91	1.33
Փետրվար	758228	330989	185372	516361	275392	791753	723027	1514781	2.00	1.35
Մարտ	779409	328565	181784	510350	280999	791348	747675	1539023	1.97	1.39
Ապրիլ	755531	335125	190207	525332	281692	807024	743716	1550740	2.05	1.38
Մայիս	752983	341953	191234	533187	289762	822949	753089	1576038	2.09	1.42
Հունիս	713262	347608	196380	543988	291526	835515	752044	1587559	2.23	1.44
Հուլիս	787421	357688	204910	562598	296773	859371	743062	1602433	2.04	1.43
Օգոստոս	731287	365118	191672	556790	297452	854242	750624	1604867	2.19	1.44
Սեպտեմբեր	718843	360417	206087	566504	301341	867845	730562	1598407	2.22	1.45
Հոկտեմբեր	734622	364382	210552	574934	306060	880994	745251	1626245	2.21	1.46
